

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ

2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ**



ՏԱՐԱԾՔԸ (ՀՀ տարածքի 15.1%-ը)	4506 քառ.կմ
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ բնակչ.4.7%).....	152.8 հազ. մարդ
որից քաղաքային.....	103.7 հազար մարդ
գյուղական.....	49.1 հազար մարդ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ	34 մարդ/կմ.ք.
ՏԱՐԱԾՔԸ (ՀՀ տարածքի 15.1%-ը)	4506 քառ.կմ
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ բնակչ.4.7%)	152.8 հազ. մարդ
որից քաղաքային.....	103.7 հազար մարդ
գյուղական.....	49.1 հազար մարդ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ	34 մարդ/կմ.ք.
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԹԻՎԸ.....	109
որից քաղաքային.....	7
գյուղական.....	102
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ	135
որից սահմանամերձ, լեռնային եւ բարձր լեռնային.....	105
ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ	472կմ
Իրանի Իսլամական Հանրապետության հետ	42 կմ
Ադրբեջանի Հանրապետության հետ	382 կմ
(որից 110կմ-ը Նախիջեանի ԻՀ հետ)	
ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԸ	ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը զբաղեցնում է հանրապետության տարածքի ավելի քան 15 տոկոսը, հանդիսանում է արտաքին աշխարհի հետ ցամաքային կապի հարավային միակ դարպասը՝ պահպանելով պատմականորեն ձևավորված իր կարևորագույն աշխարհաքաղաքական և ռազմավարական նշանակությունը:

Մարզն աչքի է ընկնում հարուստ բնահումքային ռեսուրսներով, բուսական և կենդանական աշխարհի բացառիկ բազմազանությամբ, պատմամշակութային և բնական հուշարձաններով, որոնք բավարար հենք են հանդիսանում զբոսաշրջության ամենատարբեր ուղղությունների զարգացման համար:

Բնական հուշարձաններից հայտնի են Գորիսի և Խնձորեսկի «բուրգերն» ու քարայրերը, Շաքիի ջրվեժը (18մ)՝ Փոքր Կովկասի ամենաբարձր ջրվեժը, Որոտանի և Ողջիի կիրճերը, «Սատանի կամուրջը», Ծավի՝ աշխարհի ամենամեծ բնական սոսիների ռելիկտային պուրակը (60 հա), Շիկահողի արգելոցը, «Ջանգեզուր» արգելավայրը, «Արևիկ» ազգային պարկը, Մթնածորի անտառը:

Պատմամշակութային հուշարձաններից ամենահայտնիներից են Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանավանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիտի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Զորաց քարերի հնագույն աստղադիտարանը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:

Բնական պաշարների առկայության և շահագործման առումով առավել հանրահայտ են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը:

Զգալի են բազալտի, մարմարի, կրի, կավի պաշարները, կան թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի մեծ տեսականի, հիդրոէներգետիկ մեծ ռեսուրսներ, բերրի սևահողեր, անտառներ և ալպյան մարգագետիններ:

Մարզին բնորոշ են բարձր գոտիականությունը (միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է շուրջ 2200մ.) և կլիմայական տիպերի մեծ բազմազանությունը՝ մերձարևադարձայինից մինչև մերձբևեռային: Ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է՝ երկրորդը հանրապետությունում (3906մ), ամենացածր կետը ծովի մակերևույթից 375 մետր է (Մեղրիի տարածաշրջան). խոշոր գետերն են՝ Որոտանը, Ողջին, Մեղրին. բնական և արհեստական ջրավազաններից հայտնի են Կապույտ լիճը, Սև ջուր և Գյուլգյուլ լճակները, Շամբի և Սպանդարյանի ջրամբարները:

Մարզն ունենալով արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական և տնտեսական միավորներից մեկը, դեռևս մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական որոշակի հիմնախնդիրներ ունեցող տարածաշրջաններից մեկը:

Մարզում առկա հիմնախնդիրներն առավելապես պայմանավորված են՝

- մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ.
- գործազրկության բարձր մակարդակով (այն մոտ 1.3 անգամ բարձր է հանրապետական միջին ցուցանիշից) և բնակչության ճնշող մեծամասնության ցածր եկամուտներով.
- ենթակառուցվածքների զարգացվածության ոչ բավարար աստիճանով.
- սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային՝ սակավամարդ և սակավահող բնակավայրերի մեծ թվով (80%)
- վերը նշված և առանձին այլ գործոններով պայմանավորված՝ կապիտալ ներդրումների դեռևս ոչ բավարար մակարդակով և այլն:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են /հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալում նախնական տվյալներով մարզի չափաբաժինը կազմում է 18.5%:/

Բեռնափոխադրումները մարզում իրականացվել են բացառապես ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզի պետական միասնական գրանցամատյանում 2011թ. գրանցվել են 99 իրավաբանական անձ և 471 անհատ ձեռնարկատեր:

Մարզում հիմնականում առկա են անհրաժեշտ նախապայմաններ բազմաճյուղ տնտեսության կազմակերպման և զարգացման համար:

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Մարզում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացվել է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, հանրապետական գործադիր մարմինների և նրանց տարածքային ծառայությունների հետ համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա:

Օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակում մարզպետը ապահովել է ՀՀ օրենքների, ՀՀ նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև նորմատիվ այլ իրավական ակտերի կատարումը:

Մարզպետարանի կանոնադրության համաձայն, կանոնակարգվել է մարզպետի տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգումը: Աշխատանքները կազմակերպվել են մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների կանոնադրություններին ու աշխատանքային ծրագրերին համապատասխան:

Սահմանված կարգով կազմակերպվել է մարզային ենթակայության շուրջ 150 կազմակերպությունների գործունեությունը, համակարգվել հանրապետական գործադիր մարմինների ավելի քան 70 տարածքային ծառայությունների աշխատանքը:

Մարզպետարանի 2011թ. գործունեության համար հստակեցվել են մարզի զարգացման հիմնական ուղղությունները, մարզում առկա և առաջնահերթ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, դրանց լուծման համար մշակվել անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր, որոնք տեղ են գտել մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա կազմված 2011 թվականի տարեկան աշխատանքային պլանում, մարզպետարանի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերում:

2011 թվականի տարեկան աշխատանքային պլանի և աշխատանքային ծրագրերի համաձայն մարզպետի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն ու առաջնահերթություններն էին՝

- Մարզում ՀՀ կառավարության Կայուն զարգացման ռազմավարական ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, բնակչության եկամուտների աճը և աղքատության կրճատումը.
- Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացումը.
- Բնակչության զբաղվածության աճը և գործազրկության մակարդակի նվազումը.
- Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների ապրանքայնության բարձրացումը.
- Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավումը.
- Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի բարձրացումը.

- Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը.
- Մարզպետարանի կարողությունների ուժեղացումը և տարածքային կառավարման արդյունավետության բարձրացումը.
- Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների ընդլայնումը և նրանց գործունեության արդյունավետության բարձրացման օժանդակումը.
- Հանրային կառավարման համակարգում, հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորումը.
- Արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը.
- Միջազգային և դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը և նրանց կողմից նպատակային ծրագրերի իրականացման օժանդակումը.
- Փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
- Մարզում պետական ֆոնդի հողերի վերաբաշխման կազմակերպման, հողաշինության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման օժանդակումը, հողերի միավորման ծրագրերի և հողի շուկայի ձևավորման աջակցումը.
- Կրթության ոլորտում կառուցվածքային և ընթացիկ բովանդակային բարեփոխումների իրականացման արդյունավետության բարելավման ապահովումը.
- Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության, նրանց բնականոն զարգացմանն ու սոցիալական ինտեգրացիայի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.
- Մշակութային և սպորտային ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը.
- Առողջապահության բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը, առողջապահական ծառայությունների մատչելիությանն ու որակի բարձրացումը.
- Համայնքային բյուջեների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը.
- Քաղաքային և գյուղական համայնքների քաղաքաշինական գլխավոր փաստաթղթերի կազմման աշխատանքների կազմակերպումը.
- Արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության պաշտպանության կազմակերպման և իրականացման ապահովումը:

Մարզպետարանի աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների միջոցով, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համաձայնեցված համագործակցության, պետական և համայնքային շահերի ներդաշնակ զուգորդման արդյունքում հնարավոր է եղել ապահովել մարզի_սոցիալ-տնտեսական վիճակի կայունացմանն ու բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության արդյունավետ իրականացումը:

Կցվում է մարզի սոցիալ-տնտեսական վիճակը և մարզպետարանի գործունեությունը բնութագրող առանձին ցուցանիշների մասին տեղեկանքը (հավելված N 1):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի կողմից հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ, համայնքների, հանրապետական գործադիր մարմինների, մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների հետ անցկացվել 36 խորհրդակցություն: Մարզխորհրդի նիստերում, խորհրդակցություններում քննարկվել են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի, կրթության, մշակույթի և սպորտի, առողջապահության և սոցիալական ապահովության խնդիրներին առնչվող, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման, սոցիալական տարբեր ծրագրերի իրագործման, զորակոչի կազմակերպման հետ կապված և այլ հարցեր: Քննարկումների արդյունքներում տրվել են համապատասխան հանձնարարականներ, մշակվել և իրականացվել անհրաժեշտ միջոցառումներ, առանձին հարցերի ու խնդիրների լուծման համար առաջարկություններ ներկայացվել ՀՀ կառավարություն, նախարարություններ և գերատեսչություններ:

Պարբերաբար, երկուշաբթի օրերին, մարզպետի մոտ անցկացվել է գործակարգավորական բնույթի օպերատիվ խորհրդակցություն, որի ընթացքում կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները ստացել են համապատասխան հանձնարարականներ, ներկայացրել տեղեկատվություն նախորդ շաբաթվա ընթացքում կատարած աշխատանքների, առկա խնդիրների և առաջիկա անելիքների մասին, մարզպետին զեկուցել կատարման ենթակա փաստաթղթերի մասին:

Ուշադրության կենտրոնում են եղել ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ապահովման ուղղությամբ մարզում իրականացվող աշխատանքների ընթացքը, ինչպես նաև ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով օպերատիվ լուծում պահանջող հարցերը:

Հաշվետու ժամանակաշրջանում, մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և ծագած խնդիրները լուծելու նպատակով, մարզպետը ՀՀ կառավարությանը և նախարարություններին է ներկայացրել 146 առաջարկություն և միջնորդություն, որից 117-ը լուծում է ստացել, 29-ը ընթացքի մեջ է: Ներկայացվել է ՀՀ կառավարության որոշման 28 նախագիծ. ընդունվել է 20-ը, ընթացքի մեջ է 7-ը, մերժվել՝ 1-ը: Յուրաքանչյուր ամիս քննարկվում է մարզպետի կողմից ՀՀ վարչապետին, նախարարություններին ներկայացված առաջարկությունների կատարման ընթացքը:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ուսումնասիրությունների և քննարկումների հիման վրա մարզպետի կողմից առաջարկություններ են ներկայացվել մի շարք օրենքների նախագծերում, օրենքներում փոփոխություններ կատարելու և այլ իրավական ակտերի ու նախագծերի վերաբերյալ:

Համակարգված աշխատանք է տարվել մարզում առկա հիմնախնդիրների լուծման առանձին ծրագրային առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելու, ինչպես նաև ՀՀ պետբյուջեի 2012թ. նախագծերի կազմման և ՀՀ Սյունիքի մարզի 2012թ. սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման ուղղությամբ:

Շարունակվել է միջազգային կառույցների, բարեգործական կազմակերպությունների և հիմնադրամների հետ ակտիվ համագործակցությունը:

Մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, ինչպես նաև առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման նպատակով տարվա ընթացքում տեղական և միջազգային կառույցների, հիմնադրամների և բարեգործական կազմակերպությունների միջոցով, ընդգրկելով մարզի գրեթե բոլոր համայնքները, իրականացվել են շուրջ 13.6 մլրդ. դրամի ներդրումային, հումանիտար և վարկային ծրագրեր (հավելված N 2):

Մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է եղել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման աջակցումը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, հաշվի առնելով, որ փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում օգտագործում են տեղական ռեսուրսներ, չեն պահանջում խոշոր ներդրումներ և աշխատատեղեր են ապահովում համեմատաբար կարճ ժամանակահատվածում:

Մարզի փոքր և միջին բիզնեսի աջակցման նպատակով իրականացվել են մոտ 5,43 մլրդ. դրամի վարկային ներդրումներ՝ SEF ունիվերսալ վարկային կազմակերպության միջոցով 511.0 մլն. դրամ, UMCOR «Արեգակ» վարկային ծրագրի շրջանակներում՝ 782.0 մլն. դրամ, «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի միջոցով 3375.0 մլն. դրամ, «Ֆինքս» ՈՒՎԿ ՓԲԸ-ի իջոցով 632.0 մլն. դրամ:

Իրականացվել են ավելի քան 6 միլիարդ դրամի զարգացման ծրագրեր: Մարզի տնտեսության զարգացման համար էական ներդրումներ են իրականացրել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամը՝ 1.03 մլրդ դրամ, «Լեռ-էքս» ՍՊԸ-ն՝ 1.46 մլրդ. դրամ, «Իստեյտ մենեջմենթ ենդ ադմինիստրեյշն քամփնի» ՓԲԸ-ն՝ Տաթևի վանական համալիրի վերակառուցման ծրագրում՝ 525.3 մլն. դրամ:

Ցուցաբերվել է շուրջ 223.5 մլն. դրամի մարդասիրական օգնություն, իրականացվել են 7.3 մլրդ դրամի վարկային ներդրումներ:

Մարզպետարանի աջակցությամբ և ՀԻՄՁ ծրագրի հովանավորությամբ մարզի տարածաշրջանների բիզնես աջակցության կենտրոնները կազմակերպեցին «Սյունիք ՊՈՌԴ ԷՔՍՊՈ-2011» ցուցահանդես-վաճառք, հիմնականում տեղական հումք վերամշակող և սննդի արտադրությամբ զբաղվող մարզի գործարարների մասնակցությամբ:

2011 թվականի ընթացքում մարզպետարանի և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հետ գործնական կապերը կրել են շարունակական բնույթ, որի արդյունքում Կապան և Գորիս քաղաքների բնապահպանության տեղեկատվության հասարակական կենտրոնները ծավալել են բավականին ակտիվ գործունեություն, լուսաբանվել տեղական և հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները որոշակիորեն նպաստել են զբաղվածության մակարդակի բարձրացմանը, բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, բարելավել մրցակցային միջավայրը, միջմարզային կոոպերացիայի ստեղծմանը, պետական և տեղական բյուջեների եկամուտների ավելացմանը և այլն:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ներդրումային ծրագրերի առաջարկ ներկայացրած կազմակերպություններից 2011 թվականին մարզում հանքարդյունաբերության, հիդրոէներգետիկ, տեղական

հումքի վերամշակման, սննդի և թեթև արդյունաբերության բնագավառներում ստեղծվել են 16 նոր ձեռնարկություններ՝ 294 նոր աշխատատեղով, ինչպես նաև գրանցվել 20 անհատ ձեռնարկատերեր՝ 32 նոր աշխատատեղով: Գործող ձեռնարկություններում ստեղծվել է 244 նոր աշխատատեղ: Վարձատրվող հասարակական աշխատանքներ, ծրագրի շրջանակներում ստեղծվել է 142 ժամանակավոր աշխատատեղ:

Օրենսդրությամբ սահմանված կարգով մարզպետարանի կողմից ուսումնասիրվել են մարզային ենթակայության 21 կազմակերպությունների և 20 համայնքների ղեկավարների ընդունած իրավական ակտերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին և կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Ուսումնասիրվել է մարզի քաղաքային և գյուղական համայնքներից ստացված ավագանիների նիստերում ընդունված 2936 որոշում, որից՝ 1971-ը՝ անհատական, 965-ը՝ նորմատիվ, դրանց՝ ՀՀ օրենսդրության համապատասխանության մասին կազմվել է 788 եզրակացություն: ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ և թերություններով ընդունված ավագանու որոշումները վերանայելու և ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով, մարզի համայնքների ղեկավարներին ուղարկվել է 71 պաշտոնական գրություն, որոնց սահմանված կարգով ընթացք է տրվել:

2011թ. ընթացքում 29 պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ, կազմվել համապատասխան եզրակացություններ և հաշվետվություններ:

2011 թվականին մարզպետարանի հաստիքային միավորների թիվը կազմում է 140, որից 111-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոններ են:

Կազմվել և քաղաքացիական ծառայության խորհուրդ են ներկայացվել քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի և այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման, թեստավորման և հարցազրույցի փուլերի համար հարցաշարեր, կատարվել համապատասխան փոփոխություններ քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում:

2011թ. աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անց է կացվել 6 մրցույթ /3-ը՝ գլխավոր, 3-ը առաջատար պաշտոնների համար/: Ապահովվել է քաղծառայողների մեկ երրորդի վերապատրաստումը և ատեստավորումը:

Մարզպետը 2011թ. ընդունել է 262 որոշում, արձակել 150 կարգադրություն, որոնք ուղղված են եղել ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների կատարմանը, հանրապետական գործադիր մարմինների, նրանց տարածքային ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերի լուծմանը, մարզային ենթակայության կազմակերպությունների ու մարզպետարանի գործունեության բարելավմանը:

ՀՀ կառավարության, վարչապետի որոշումներին ու հանձնարարականներին, ընդհանուր առմամբ, սահմանված կարգով և պահանջվող ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք: Որոշ հանձնարարականներ կատարվել են ուշացումով՝

կապված աշխատանքի մեծ ծավալների, լրացուցիչ ուսումնասիրությունների անհրաժեշտության հետ կամ տեխնիկական պատճառներով:

2011 թվականին առաքվել է 6120 փաստաթուղթ, մարզպետարան մուտքագրվել՝ 8864 թղթակցություն, այդ թվում՝ ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 15, ՀՀ Ազգային ժողովից՝ 7, ՀՀ Առաջին տիկնոջ գրասենյակից՝ 1, ՀՀ կառավարության աշխատակազմից՝ 1117, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 770, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 1130, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 3852, քաղաքացիներից՝ 1626 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 26: ՀՀ նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 41, Ազգային ժողովից՝ 1, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 33, նախարարություններից՝ 14, ՀՀ Առաջին տիկնոջ գրասենյակից՝ 1 դիմում: Ստացված բոլոր դիմումներին սահմանված կարգով ընթացք է տրվել, կատարվել է նաև դրանց վերլուծությունը (կցվում է տեղեկանքը, հավելված N 3):

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի 2012 թվականի նախնական աշխատանքային ծրագիրը, ընդունվել ի գիտություն: Ընթացքի մեջ է 2011 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարողականների գնահատման գործընթացը:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2011թ. ընթացքում կատարվել է 513 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման ու համայնքային ծառայության հարցեր

ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2011 թվականի փետրվարի 23-ի «Վարչական հսկողության 2011 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N34-Ա հրամանի համաձայն Սյունիքի մարզի 20 համայնքներում վարչական հսկողություն է իրականացվել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ: Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված թերություններն ու բացթողումները շտկվել են, օրենքով սահմանված գործառույթների իրականացումը համապատասխանեցվել է ՀՀ օրենսդրության պահանջներին: Կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային հաղորդումներ են ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում մարզպետը 2011թ. ապահովել է մարզի 19 համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքները: Կազմակերպական օժանդակություն է ցույց տրվել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին ու համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման՝ օրենքով սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն, ինչպես նաև դրանց հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովելու ուղղությամբ:

Մարզպետարանը, սահմանված կարգով, իր իրավասությունների շրջանակներում լուծում է տվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարձրացված հարցերին, համապատասխան առաջարկություններ և միջնորդություններ է ներկայացրել ՀՀ կառավարություն և ՀՀ նախարարություններ:

Համագործակցելով համայնքային ծառայության ոլորտի պետական լիազոր մարմնի հետ, համակարգված աշխատանքներ են տարվել համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն ապահովելու ուղղությամբ:

Մարզպետարանի՝ ըստ տարածաշրջանների, համայնքների ղեկավարների և աշխատակազմերի քարտուղարների հետ պարբերաբար անցկացվող աշխատանքային խորհրդակցությունների ընթացքում քննարկվել են համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության, թափուր պաշտոնների համալրման, մրցույթների և ատեստավորման գործընթացների կազմակերպման, համայնքային ծառայողների անձնական գործերի վարման և համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մյուս գործառույթների պատշաճ կատարման հարցերը: Ապահովվել են մարզի համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների շտեմարանների փոփոխված տվյալների՝ սահմանված ժամկետներում հավաքագրումը և դրանց պարբերաբար ներկայացումը ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

2012թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է համայնքային ծառայության 399 պաշտոն: Հաշվետու տարում թափուր պաշտոնների համալրման համար հայտարարվել է 43, կայացել 37 մրցույթ, ատեստավորվել է 48 համայնքային ծառայող: 2011 թվականի ընթացքում «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության համաձայնությամբ իջեցվել են մինչև 1000 բնակիչ ունեցող մարզի երկու համայնքների ղեկավարի աշխատակազմերի քարտուղարների պաշտոնների անձնագրերի՝ բարձրագույն կրթության և աշխատանքային ստաժի պահանջները:

Մարզպետարանը վերահսկողություն է իրականացրել համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի նկատմամբ, 2011 թվականին վերապատրաստվել է 39 համայնքային ծառայող, ապահովել է համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը, կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների ժամանակացույցերը: Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել մարզի 8 համայնքներում կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ: Նշված գործառույթների վերաբերյալ սահմանված ժամկետներում տեղեկատվություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

Մարզպետարանը 2011 թվականին աշխատանքներ է տարել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բարելավման ուղղությամբ: Համայնքների ղեկավարների և աշխատակազմերի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով պարբերաբար նրանց հետ, ըստ տարածաշրջանների, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից անց են կացվել խորհրդատվական բնույթի սեմինար-պարապմունքներ, իսկ ՀՀ տարածքային կառավարման նախարարության և «Հայաստանի համայնքների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից 2011 թվականին վերապատրաստվել են համայնքների 76 ղեկավարներ ու ավագանիների անդամներ: Ապահովվել է վերապատրաստման գործընթացի կազմակերպման ու հսկողություն իրականացնելու վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի հանձնարարականի կատարումը:

Աշխատանքներ են տարվել նաև աշխատակազմերի տեխնիկական վերազինման ուղղությամբ: Սեփական և արտաքին միջոցների ներգրավմամբ մարզի 70 գյուղական համայնքներ ապահովված են համակարգչային տեխնիկայով, այդ համայնքներում գործում է ինտերնետային կապ: Համայնքների հետ էլեկտրոնային հեռահաղորդակցման ապահովման ու տեղեկատվության փոխանակման օպերատիվության նպատակով մարզպետարանի օժանդակությամբ բոլոր 109 համայնքներն ունեն էլեկտրոնային հասցեներ, 5 քաղաքային համայնքներ ունեն պաշտոնական վեբ-կայքեր:

Համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման նպատակով համայնքներում կազմվել են գործավարության մատյաններ, համապատասխան շենքային պայմանների առկայության դեպքում

առանձնացվել են ավագանու անդամների աշխատասենյակներ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ անհրաժեշտ աշխատանքային տարածքներ:

Մարզի համայնքներում հանրային իրազեկման գործընթացն արդյունավետ և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով ձեռնարկվել են միջոցներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման, ինչպես նաև համայնքներում հանրային իրազեկման գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

Մարզպետարանի կայքում հրապարակվել են համայնքների ղեկավարների 2010 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, տեղադրվել 2011 թվականի ընթացքում մարզպետարան առաքված, համայնքների ավագանիների և համայնքների ղեկավարների կողմից ընդունված որոշումները: Համայնքներում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի պահանջների համաձայն տեղեկատվական վահանակների միջոցով ապահովվել է տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի հրապարակումը: Մշտական հսկողություն է իրականացվում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման նպատամբ և սահմանված պարբերականությամբ արդյունքները ներկայացվում ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

Հաշվետու տարում լրացավ Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15 ամյակը: Ի կատարումն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի ապրիլի 1-ի «Հոբելյանական միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N264-Ա որոշման, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի 15-ամյա հոբելյանական միջոցառումների ծրագիրն արդյունավետ իրականացնելու նպատակով, գործընթացը մարզպետարանի կողմից վերցվել է հսկողության, մշակվել է գործողությունների պլան, համաձայն որի ապահովվել է համագործակցություն ոչ միայն համայնքների, այլև մարզում գործող շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ու այլ կառույցների հետ: Կատարվել են ծրագրի կետերով նախատեսված, մարզպետարանին առնչվող բոլոր միջոցառումները:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությանն առնչվող հարցեր

Մարզպետը ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի համաձայն, իր լիազորությունների շրջանակներում համագործակցել է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ՝ ապահովելով համապատասխան բնագավառներում ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության ու վարչապետի որոշումների և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը, իրականացրել դրանցից բխող անհրաժեշտ կառավարչական ու կազմակերպչական գործառույթներ:

Մարզպետը, որպես զորակոչային հանձնաժողովի նախագահ, իր իրավասությունների շրջանակներում, հրավիրել է խորհրդակցություններ, հանձնաժողովի նիստեր, ընդունել որոշումներ և տվել հանձնարարականներ, համապատասխան տարածքային ծառայությունների, համայնքների ղեկավարների և այլ պաշտոնատար անձանց ուշադրությունը հրավիրել զինապարտների հաշվառման, զորակոչի և զորավարժությունների կազմակերպման ապահովման վրա: Տարածքային զինկոմիսարիատների, ոստիկանության մարմինների, համայնքների ղեկավարների հետ աշխատանքներ են տարվել զորակոչից խուսափող անձանց հայտնաբերելու և զորակոչելու ուղղությամբ:

Ձեռնարկված միջոցների շնորհիվ կատարվել են 2011 թվականի տարեկան զորակոչային պլանները: Նախատեսված 738-ի դիմաց զորակոչվել է 771 զինակոչիկ, զորակոչի պլանը կատարվել է 104.4 տոկոսով: ՀՀ կառավարության 27.05.2010թ. N657-Ն որոշման համաձայն համայնքներում ներդրվել և վարվում են քաղաքացիների զինվորական հաշվառման գրանցամատյանները:

ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից հաստատված միջոցառումների պլանի համաձայն, 2011 հունիսի 16-ին անց են կացվել «Խոշոր անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով, իսկ նոյեմբերի 17-ին՝ «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության բերման ժամանակ և հակառակորդի հարձակումից հետո» թեմայով շտաբային, սեպտեմբերի 12-ից 13-ը՝ «Անտառային հրդեհների հակազդում» թեմայով հրամանատարական շտաբային ուսումնավարժությաններ: Տարբեր թեմաներով մարզի համայնքներում անց են կացվել 30 շտաբային ուսումնավարժություններ:

Հաշվետու տարում կազմվել և հաստատվել են ՀՀ Սյունիքի մարզի ու համայնքների քաղաքացիական պաշտպանության նոր, վերանայվել՝ մարզային ծառայությունների տարեկան պլանները:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ում, ըստ տարեկան աշխատանքային պլանի, վերապատրաստվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական և այլ կազմակերպությունների 44 աշխատակից:

Նշված ոլորտում ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնելու, ՀՀ օրենսդրությամբ սահմանված գործառույթների կատարումն ապահովելու, հանրապետական, մարզային պլաններով ու ծրագրերով նախատեսված քաղաքացիական պաշտպանության միջոցառումները կազմակերպելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակների կանխման ու հետևանքների վերացման աշխատանքները համակարգելու նպատակով ապահովվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայության ՀՀ փրկարարական ծառայության մարզային փրկարար վարչության, մարզպետարանի աշխատակազմի, համայնքների ղեկավարների, մարզային մյուս կառույցների համատեղ և համաձայնեցված գործունեությունը:

Հաշվետու ժամանակահատվածում մարզում գրանցվել է 289 արտակարգ իրավիճակի դեպք (նախորդ տարվա 103-ի դիմաց), զոհվել է 11, տուժել 16 մարդ (նախորդ տարի նույն ժամանակահատվածում զոհվել է 8 և վիրավորվել 43 մարդ):

Արձանագրվել են 260 տեխնաձին արտակարգ իրավիճակների դեպք (նախորդ տարի՝ 79), որից անտառային հրդեհներ՝ 249 դեպք (նախորդ տարի՝ 63), տարերային արտակարգ իրավիճակների դեպքեր՝ 20 (նախորդ տարի՝ 14) և կենսաբանական արտակարգ իրավիճակի 9 դեպք:

Մարզպետն իր իրավասությունների սահմաններում համակարգել է ոստիկանության և ազգային անվտանգության ծառայության տարածքային մարմինների գործունեությունը հասարակական կարգի պահպանության, կազմակերպված հանցավորության և թմրամոլության, զենքի, հրազենի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի աշխատանքներում, օժանդակել հանցագործությունների կանխման միջոցառումների մշակմանը և իրականացմանը, վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված կարգով կատարմանը:

Մարզպետն իր լիազորությունների շրջանակներում 2011 թվականին համապատասխան միջոցներ է ձեռնարկել պետական սահմանի պահպանության, սահմանապահ ուժերի մարտունակության և օպերատիվության բարձրացման օժանդակման, սահմանապահ ուժերի և սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության բարելավման ուղղությամբ:

Սերտ համագործակցություն է հաստատվել ՀՀ Սյունիքի մարզպետարանի և Ռուսաստանի Դաշնության անվտանգության դաշնային ծառայության Հայաստանի սահմանապահ վարչության N2393 զորամասի հրամանատարության միջև: Մարզպետը մշտապես մասնակցում է ՀՀ և ՌԴ պետական տոների կապակցությամբ կազմակերպված միջոցառումներին, խրախուսում ծառայության ընթացքում աչքի ընկած զինծառայողներին, օժանդակում զորամասի կենցաղային պայմանների բարելավմանը:

Մարզպետի կողմից առանձնահատուկ ուշադրության են արժանացել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, զոհված և վիրավոր ազատամարտիկների, ինչպես նաև սոցիալապես կարիքավոր ընտանիքները: Նրանց պարբերաբար ցուցաբերվում է ֆինանսական և նյութական օժանդակություն:

Շեղանկային աշխատանք է տարվել ՀՀ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թվականների միջոցառումների, ՀՀ կառավարության 27.03.2008թ N1039-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացման ուղղությամբ:

Մարզի տարածքում 2011 թվականին արձանագրվել է հանցագործության 513 դեպք, նախորդ տարվա 463-ի դիմաց: Բացահայտումը կազմել է 93.8%, նախորդ տարվա 92.9%-ի դիմաց: Արձանագրվել է թմրամոլության և թմրանյութերի ապօրինի շրջանառության 52 դեպք, նախորդ տարվա 49-ի դիմաց, բացահայտումը կազմել՝ 88.5%, նախորդ տարվա 98%-ի դիմաց: Արձանագրվել է զենքի, հրազենի և ռազմամթերքի ապօրինի շրջանառության 22 դեպք, նախորդ տարվա 29-ի դիմաց, բացահայտումը կազմել՝ 100%, նախորդ տարվա 96.6%-ի դիմաց:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում, անհրաժեշտ աշխատանքներ են տարվել նաև հանրապետական գործադիր մարմինների մյուս տարածքային ծառայությունների հետ՝ ապահովելով նրանց, մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների փոխադարձ կապը և համագործակցությունը:

Մարզում իրականացվել է անշարժ գույքի 1532 օտարման գործարք, որից 599-ը՝ հողի օտարման, 2010 թվականի՝ համապատասխանաբար 1598-ի և 630-ի դիմաց:

2011 թվականին բնակչության բնական հավելաճը կազմել է 317 մարդ: Գրանցված ամուսնությունների թիվը կազմել է 751, իսկ ամուսնալուծությունների թիվը՝ 121:

2011 թվականին մարզ եկողների (հաշվառվածների) թիվը կազմել է 1144 մարդ (որից ներմարզային միգրացիա՝ 696 մարդ), իսկ մեկնողներինը (հաշվառումից դուրս եկածներինը) 510 մարդ (որից ներմարզային միգրացիա՝ 160 մարդ), նախորդ տարվա համեմատ համապատասխանաբար 240 և 761 մարդու դիմաց:

Հաշվետու տարում համակարգված աշխատանքներ են տարվել նաև ՀՀ Սյունիքի մարզում հոկտեմբերի 12-ին անցկացված մարդահամարի աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ: Մարդահամարի մարզային հանձնաժողովի, հանրապետական գործադիր մարմինների համապատասխան մարզային ծառայությունների և համայնքների ղեկավարների կողմից համատեղ իրականացված նախապատրաստական աշխատանքների արդյունքում մարդահամարն անց է կացվել կազմակերպված և սահմանված ժամկետներում:

Մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացումն ըստ բնագավառների

Ֆինանսական բնագավառ

Մարզպետն իր լիազորությունների և իրավասությունների շրջանակներում աշխատանքներ է տարել ՀՀ պետական բյուջեից մարզպետարանին, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող բնագավառներին և ծրագրերին նախատեսված միջոցների հատկացման ուղղությամբ, սահմանված կարգով վերահսկել դրանց նպատակային օգտագործումը:


2011թ. տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցների ֆինանսավորումն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.

Ֆինանսավորման ոլորտը	2010թ. փաստացի ֆինանսավորված է (հազ.դրամ)	2011թ. նախատեսված գումարը (հազ. դրամ)	2011թ. փաստացի ֆինանսավորված է (հազ.դրամ)	Կատարումը (%)
ՀՀ Սյունիքի մարզպետարան	270701.4	292900.3	288723.2	98.6
Կրթություն, այդ թվում	3943251.5	3878170.7	3867200.8	99.7
Հանրակրթական ուսուցում	3674535.4	3610700.8	3603526.6	99.8
Հատուկ կրթություն	202077.7	190360.4	190360.3	100
Արտադպրոցական դաստիարակություն	27968.3	34827.2	31031.6	89.1
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների զծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	17452.1	21064.3	21064.3	100
Մանկավարժների և դպր. երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	21218.0	21218.0	21218.0	100
Մշակույթ, այդ թվում	47818.0	52938.6	52938.6	100
Թանգարան	8568.6	9605.7	9605.7	100
Մշակույթի տուն	1301.8	1482.7	1482.7	100
Թատրոն	30775.9	34678.5	34678.5	100
Մշակութային միջոցառումներ	7171.7	7171.7	7171.7	100
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ	113051.0	1457564.1	1457514.0	100
Ավտոճանապարհների ձմեռային պահպանում և շահագործում	105239.0	105239.0	105239.0	100
Դոտացիա	1860468.9	1863210.9	1863210.9	100
Համանրներին տրվող այլ տրանսֆերտներ	120365.3	0	0	
ԸՆԴԱՄԵՆԸ	6460895.1	7650023.6	7634826.5	75.5

Առողջապահության բնագավառում հիվանդանոցային, ամբուլատոր-պոլիկլինիկական և դիսպանսերային ծրագրերով նախատեսված բազային ծավալը 2011թ. կազմել է 1.67 մլրդ. դրամ, առողջապահության գործակալության կողմից ընդունված 1.65 մլրդ. դրամ կատարողականը ֆինանսավորվել է ամբողջությամբ:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 2011թ. մարզի 109 համայնքներին նախատեսված 1.86 մլրդ. դրամ դոտացիաները հատկացվել են ամբողջությամբ:

Համայնքների բյուջեների կատարման ընթացքը ըստ հարկատեսակների հետևյալն է.




Դոտացիաները հիմնականում նպատակաուղղվել են տեղական ինքնակառավարման մարմիններին գործող օրեսդրությամբ վերապահված պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացմանը:

Համայնքների բյուջեները եկամտային մասով կատարվել են 97.8%, իսկ սեփական եկամուտները ապառքներով՝ 94.6%, աճը 2010 թվականի համեմատ կազմել է 8.2%: Սեփական եկամուտների բացարձակ աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմում է 75.9 մլն. դրամ:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 998.9 մլն.դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմում է 19.6%, գույքահարկինը՝ 21.3%, վարձակալությամբ տրված գույքի վարձավճարներինը՝ 35.4%:

Ցուցանիշներ			
Համայնքների եկամուտները, այդ թվում	Նախատեսված ընդամենը եկամուտներ	2009թ.	2819643.7
		2010թ.	3130739.5
		2011թ.	3051702.1
Համայնքների ընդամենը եկամուտների կատարման տոկոսը	մարզի միջինը %/	ընդամենը	
		2009թ.	88.7%
		2010թ.	95.9%
		2011թ.	97.8%
Սեփական եկամուտների աճը նախորդ տարվա համեմատ	հազ.դրամ	ընդամենը	
		2009թ.	118816.3
		2010թ.	41825.9
		2011թ.	75887.5

Համայնքների բյուջեներով իրականացված ծախսերն ունեն հետևյալ պատկերը.



ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից գումարներ հատկացնելու, համայնքներին սուբվենցիաններ տրամադրելու, ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հանրապետական գործադիր մարմիններին են ներկայացվել 2 առաջարկություններ, որոնք ամբողջությամբ ընդունվել և դրական լուծում են ստացել:

2011թ. սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել մարզի 109 համայնքների բյուջեների ամփոփը: ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացվել 125 պետական ոչ առևտրային կազմակերպությունների պահպանման ծախսերի նախահաշիվները և հաշվարկային ցուցանիշները: Կազմվել և համապատասխան մարմիններին են ներկայացվել 2012-2014 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և 2012թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը: Պարբերաբար իրականացվել է մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի կատարման նախահաշիվների կազմման և դրանց ֆինանսավորման գործընթաց:

Տեղական ինքնակառավարման մարմիններից հավաքագրվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկների, ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների հաշվարկման հիմքում դրվող ելակետային տվյալներ:

ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են պետության կարիքների համար գնման ենթակա ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնման, «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում համայնքների կողմից կատարված աշխատանքների ֆինանսավորման գործընթացներ:

Արդյունաբերություն


Մարզի տնտեսության առանցքային ճյուղը արդյունաբերությունն է: Մարզի արդյունաբերական ձեռնարկություններում թողարկված արտադրանքի ծավալը 2011 թվականին՝ նախնական տվյալներով, ընթացիկ գներով կազմել է շուրջ 176.0 մլրդ դրամ, նախորդ տարվա նկատմամբ աճը համադրելի գներով կազմել է մոտ 23.0%:

Իրացվել է ավելի քան 158.0 մլրդ դրամի պատրաստի արտադրանք, որից ԱՊՀ երկրներում՝ 310.0 մլն դրամ, այլ երկրներում՝ 88.0 մլրդ դրամ: Հատկանշական է, որ ԱՊՀ երկրներում իրացված արտադրանքի ծավալը նախորդ տարվա համեմատ ավելացել է շուրջ 2 անգամ:

Արդյունաբերության առաջատարը հանքագործական ճյուղն է, որն ապահովել է մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի ավելի քան 86.0%-ը:

Առկա հումքային, տեխնոլոգիական, կադրային ներուժի և իրացման կայուն շուկայի առկայության պայմաններում այս ճյուղը մարզի տնտեսության մեջ տևական ժամանակ կպահպանի իր առաջնային դերը:

Մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալների բաշխվածությունը 2011 թվականին՝ ըստ տնտեսության գերակա ճյուղերի ունի հետևյալ պատկերը.



2011 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի շուրջ 18.5%-ը բաժին է ընկել Սյունիքի մարզի արդյունաբերական կազմակերպություններին:

Նախորդ տարվա համեմատ 2011 թվականին մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրության ծավալների շուրջ 23.0% աճը պայմանավորված է հանքագործական արդյունաբերության վերելքով՝ մետաղական հանքաքարերի արդյունահանման ավելի քան 20.0% և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության ծավալների մոտ 36.0% աճով: Աճ է գրանցվել նաև մշակող արդյունաբերության բնագավառում շուրջ 20.0%, այդ թվում սննդամթերքի

արտադրության՝ 20.0%, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության՝ 11.0%: Էլեկտրական սարքավորումների արտադրության ծավալները աճել են շուրջ 1.6 անգամ, ինչպես նաև աճ է գրանցվել պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության բնագավառում՝ շուրջ 36.0%:

2011 թվականին՝ նախնական տվյալներով, մարզում արտադրվել է մոտ 1376.0 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Մարզում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը կազմում է հանրապետությունում թողարկված էլեկտրաէներգիայի շուրջ 18.0%-ը, հիդրոէլեկտրակայաններում արտադրվածի՝ ավելի քան 50.0%-ը:


2011 թվականին մարզում սպառված գազի ծավալը՝ նախնական տվյալներով, կազմել է շուրջ 40.3 մլն խոր. մետր կամ շուրջ 14.5%-ով ավելի, քան նախորդ տարում: Բաժանորդ բնակիչների թիվը կազմել է 23210 (նախորդ տարվա համեմատ 1.8%-ով ավելի), իսկ կազմակերպություններինը՝ 357 (նախորդ տարվա համեմատ 15.0%-ով ավելի): Բնակչության կողմից սպառված գազի տեսակարար կշիռը կազմել է շուրջ 38.3%:

Քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության բնագավառ

2011 թվականի ընթացքում մարզում իրականացվել են շուրջ 5.5 մլրդ. դրամի համաշինարարական աշխատանքներ, որից՝ 720.7մլն. դրամի կապիտալ շինարարության և 4.8 մլրդ. դրամի հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներ:

Աշխատանքների ընդհանուր ծավալից 31,1%-ը ուղղվել է ճանապարհների հիմնանորոգմանը, նորոգմանն ու պահպանմանը, 18,3%-ը՝ ոռոգման ցանցերի հիմնանորոգմանը, 15,6%-ը՝ դպրոցների և նախադպրոցական հիմնարկների կառուցմանն ու հիմնանորոգմանը, 14,9%-ը՝ ջրամատակարարման համակարգերի կառուցմանն ու նորոգմանը, 5,1%-ը՝ մշակութային ու պատմամշակութային օբյեկտների հիմնանորոգմանն ու եկեղեցաշինությանը, 1,7%-ը՝ առողջապահական հիմնարկների կառուցմանն ու հիմնանորոգմանը, 1,6%-ը՝ դատաիրավական համակարգի շենքերի կառուցմանը, իսկ 11,7 %-ը՝ այլ ենթակառուցվածքների նորոգման աշխատանքներին:

Մարզում իրականացված քաղաքաշինական ծրագրերի ծավալներն ըստ ուղղվածությունների բնութագրվում են հետևյալ կերպ



1	Ճանապարհների հիմնանորոգում, նորոգում և պահպանում	1701,1 մլն.դրամ
2	Ոռոգման ցանցերի հիմնանորոգում	1003.3 մլն.դրամ
3	Դպրոցների և նախադպրոցական հիմնարկների կառուցում և հիմնանորոգում	855.7 մլն.դրամ
4	Ջրամատակարարման համակարգերի կառուցում և նորոգում	818,2 մլն.դրամ
5	Մշակութային ու պատմամշակութային օբյեկտների հիմնանորոգում և եկեղեցաշինություն	279,4 մլն.դրամ
6	Առողջապահական հիմնարկների հիմնանորոգում	93,7 մլն.դրամ
7	Դատաիրավական համակարգի շենքերի կառուցում	85,0 մլն.դրամ
8	Այլ ենթակառուցվածքներ	636,8 մլն.դրամ
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	5473,2 մլն.դրամ

Մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների իրականացման նպատակով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 3-ի N 108-Ն և 2011թ. սեպտեմբերի 29-ի N 1436-Ն որոշումներով ընդհանուր առմամբ Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 1 մլրդ. 440 մլն դրամ, որը նպատակաուղղվել է քաղաքային համայնքների ճանապարհային ցանցի ասֆալտապատմանն ու վերանորոգմանը, ինչպես նաև կրթական, մշակութային, նախադպրոցական օբյեկտների և բնակֆոնդի հիմնանորոգմանն ու պահպանման և խմելու ջրի ներքին ցանցերի նորոգման աշխատանքներին:

Վերոհիշյալ գումարների սահմաններում մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել են 1.2 մլրդ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ: 3 մլն. 950 հազ. դրամով համապատասխան շենք է գնվել Իշխանասարի գյուղապետարանին որպես վարչական շենք տրամադրելու համար: ՀՀ քաղաքաշինության նախարարության միջոցով ՀՀ պետբյուջեով նախատեսված միջոցների հաշվին շարունակվել է Անգեղակոթի միջնակարգ դպրոցի հիմնանորոգումը, որտեղ տարվա ընթացքում կատարվել է 127.6 մլն. դրամի շինարարական աշխատանք: Միաժամանակ սկսվել են վեց նոր օբյեկտների կառուցման կամ հիմնանորոգման աշխատանքները: Տեղ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի շինարարությունում անցած մեկ տարվա ընթացքում կատարվել է 56.5 մլն.դրամի, Կապանի թիվ 2 ավագ դպրոցի շինարարությունում՝ 108.7 մլն. դրամի աշխատանք: Սիսիանի ավագ դպրոցի հիմնանորոգման գծով կատարվել է 133.8 մլն.դրամի, Կապանի թիվ 9 դպրոցի վերանորոգման գծով՝ 45.7 մլն. դրամի, Գորիսի Ա. Բակունցի անվան տուն թանգարանի հիմնանորոգման գծով՝ 26.1 մլն. դրամի, Գորիսի Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հիմնանորոգման և ջեռուցման համակարգի վերականգնման գծով՝ 16.1 մլն. դրամի աշխատանք:

«Դատաիրավական բարեփոխումներ» ԾԻԳ-ի միջոցներով սկսվել են Կապանի դատարանի շենքի կառուցումը, որտեղ տարվա ընթացքում կատարվել է 85,0 մլն. դրամի շինարարական աշխատանք:

Որոշակի աշխատանքներ են կատարվել մարզի բնակավայրերի խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգման, ջրամատակարարման գործի բարելավման ուղղությամբ:

Ասիական զարգացման բանկի միջոցներով 350,0 մլն. դրամի աշխատանքներ են կատարվել Կապան քաղաքի ջրամատակարարման ցանցերի հիմնանորոգման, քաղաքի որոշ թաղամասերում ներքին նոր ցանցերի կառուցման ուղղությամբ: 200 մլն. դրամի հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել նաև Մեղրիի տարածաշրջանում: Մասնավորապես հիմնանորոգվել է Ագարակի խմելու ջրի մաքրման կայանը, կառուցվել Կարճևան գյուղի խմելու ջրի ներքին նոր ցանցը: 180.3 մլն. դրամով վարչական նոր շենքեր են կառուցվել Սիսիան և Ագարակ քաղաքներում:

Ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգման ուղղությամբ 32.5 մլն. դրամի աշխատանք է կատարվել նաև «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ «Հարավային» տարածքային մասնաճյուղի կողմից, որից 6.3 մլն. դրամի՝ Կապանի տարածաշրջանում, 7.5 մլն. դրամի՝ Գորիսի տարածաշրջանում, 3 մլն. 486 հազ. դրամի՝ Սիսիանի տարածաշրջանում և 15 մլն. 191 հազար դրամի՝ Մեղրիի տարածաշրջանում: Հիմնանորոգվել են 2903 գծամետր ջրամատակարարման և մոտ 500 գծամետր ջրահեռացման ցանցեր:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով շարունակվել և 2011 թվականին ավարտվել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկական մասնաշենքի հիմնանորոգումը, որտեղ տարվա ընթացքում կատարվել է 90.4 մլն դրամի աշխատանք:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի միջոցների հաշվին իրականացվել են 341.3 մլն. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ՝ Գորիս, Քարաշեն, Կորնիձոր, Անգեղակոթ, Խնձորեսկ, Խնածախ, Գեղանուշ, Մեղրի և Բնունիս համայնքներում:

«Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն» կազմակերպության կողմից "Սոցիալական տուն՝ աջակից պայմաններով" ծրագրի շրջանակներում Գորիս քաղաքում սկսվել է 20 բնակարանոց սոցիալական երկրորդ տան շինարարությունը և կատարվել 79.5 մլն. դրամի շինարարական աշխատանք, որի համար որպես համաներդրում՝ 65 մլն դրամ է հատկացվել նաև ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Մարզի բնակչության համար սոցիալական կարևոր ծրագրեր են իրականացվել նաև «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» և Ֆրանսիայի «Երկիր և մշակույթ» միջազգային բարեգործական կազմակերպությունների, ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսական բարեգործական հիմնադրամի, «Դինո Գոլդ Մայնինգ Քամֆնի» ՓԲԸ-ի, «Ագարակի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի, «Քաջարան» «Գորիս» և «Մեղրի-Ագարակ» հիմնադրամների, ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի և «Կապան-Գլենդել» միության կողմից:

Ընդհանուր առմամբ մարզի 33 համայնքներում պետական պատվերից դուրս, այլ կազմակերպությունների ընդգրկմամբ, իրականացվել է 84 ծրագիր, որի արդյունքում լուծում են ստացել սոցիալական բնույթի և բնակչության

կենսաապահովման հետ կապված մի շարք հիմնահարցեր /դպրոցների և մանկապարտեզների, խմելու և ոռոգման ջրագծերի, առողջապահական հիմնարկների, ակումբների ու կենցաղի տների վերանորոգում, խաղահրապարակների և հանգստյան գոտիների կառուցում և այլն/:

2011 թվականին վերոհիշյալ ծրագրերի գծով կատարվել է ավելի քան 331.4 մլն. դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ:

2011 թվականի ընթացքում համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել շինարարություն իրականացնելու նպատակով հողհատկացման 9 առաջարկություններ, որոնցից 6-ին տրվել է դրական լուծում, իսկ 3-ը մերժվել է:

Համայնքների ղեկավարների կողմից հաշվետու ժամանակաընթացքում տրվել է 171 շինարարության, 7 քանդման թույլտվություն և 110 շինարարության շահագործման փաստագրման ակտ:

Հաշվետու ժամանակաշրջանում որոշակի աշխատանքներ են կատարվել ինքնակամ շինարարության հայտնաբերման, կանխարգելման և կասեցման ուղղությամբ: 2011 թվականին, մարզի Կապան, Գորիս, Սիսիան, Քաջարան, Մեղրի, Ագարակ, Դաստակերտ քաղաքներում և 102 գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության ոլորտում կատարել են պլանային ստուգումներ: Պլանային ստուգումների ընթացքում արձանագրվել է ինքնակամ շինարարության 10 փաստ, այդ թվում՝ Կապանում՝ 5, Քաջարանում՝ 3, 1-ական՝ Սյունիք և Հալիձոր գյուղերում:

ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 23-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ոլորտները և անցկացման պայմանները հաստատելու մասին» N1854-Ն որոշման համաձայն, կատարվել է 14 համայնքներից ներկայացված 15 ծրագրերի ծավալների և կատարողական ակտերի ճշգրտում ու աշխատանքների կատարման ընթացքի նկատմամբ հսկողության իրականացում:

Կազմվել է ՀՀ Սյունիքի մարզի քաղաքաշինության ոլորտի 2012-2014թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2012թ. բյուջեի հայտերի նախագծերը, որոնք համաձայնեցման նպատակով ներկայացվել են համապատասխան նախարարություններին:

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքերի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների և /կամ/ ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցման կարգի մասին» N1855-Ն որոշման պահանջներին համապատասխան, կազմակերպվել է մարզի քաղաքային և գյուղական 20 համայնքներում առկա 722 բազմաբնակարան շենքերի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասերի հատկագծերի կազմումը ու սահմանված կարգի համաձայն ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումներին:

Սահմանված կարգով կատարվել են զրհված /մահացած/ և հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

2011 թվականին համապատասխան ընթացք է տրվել բնակարանային պայմանների բարելավման նպատակով հաշվառման վերցրված 7 ընտանիքների անձնական գործերին:

Կցվում է ՀՀ Սյունիքի մարզում 2011 թվականին իրականացված քաղաքաշինական ծրագրերի մասին տեղեկանքը /հավելված 4/:

Ոլորտում որպես կարևորագույն հիմնախնդիր մնում է 4-րդ և 5-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծման և 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացման, ինչպես նաև վթարային վիճակում գտնվող դպրոցական շենքերի ուժեղացման և հիմնանորոգման հարցերը:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

Հաշվետու տարում որոշակի աշխատանքներ են կատարվել պետական և մարզային նշանակության ճանապարհների հիմնանորոգման ու պահպանման ուղղությամբ:

Ճանապարհաշինարարության բնագավառում կատարվել են ավելի քան 1 մլրդ. 700 մլն. դրամի հիմնանորոգման ու նորոգման, ինչպես նաև ավտոճանապարհների պահպանման աշխատանքներ:

Մարզպետարանի պատվիրատվությամբ մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման և շահագործման գծով 2011 թվականին կատարվել է 105.2 մլն. դրամի աշխատանք, որից Կապանի տարածաշրջանում՝ 31.9 մլն. դրամի, Գորիսի տարածաշրջանում՝ 22.7 մլն. դրամի, Սիսիանի տարածաշրջանում՝ 32.1 մլն. դրամի և Մեղրիի տարածաշրջանում՝ 18.3 մլն. դրամի:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ 2011 թվականի ընթացքում ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից մարզի տարածքում իրականացվել են 183.7 մլն.դրամի պետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ, որոնք ուղղված էին Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի իսլամական հանրապետության սահման միջպետական ճանապարհի սողանքային երկու հատվածների (կմ 313+650- կմ 313+850 և կմ 365+000) վերականգմանը (146,8 մլն. դրամ) և Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի իսլամական հանրապետության սահման միջպետական ճանապարհի կմ281+800 հատվածում ներքին հենապատի վերանորոգմանը (36,9 մլն. դրամ): Միաժամանակ 66,5 մլն դրամով կատարվել է ճանապարհների նշագծում:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար կատարվել է 690,6 մլն. դրամի աշխատանք, որից Կապանի տարածաշրջանում՝ 179,5 մլն. դրամի, Գորիսի տարածաշրջանում՝ 160,7 մլն. դրամի, Սիսիանի տարածաշրջանում՝ 118,4 մլն. դրամի և Մեղրիի տարածաշրջանում՝ 232,0 մլն. դրամի:

Ընդհանուր առմամբ տարբեր ֆինանսավորման աղբյուրներով 2011 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից իրականացվել է շուրջ 1,7մլրդ. դրամի աշխատանքներ, որից «ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ-ի միջոցներով մարզում իրականացվել է մոտ 17.0 մլն. դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ, իսկ ՀՀ պետբյուջեի միջոցներով՝ տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, պահպանման ու շահագործման, ձմեռային պահպանության համար 1,683 մլրդ. դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ:

ՀՀ պետբյուջեով տարբեր նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար իրականացվել է 904,2 մլն դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ, մարզում առկա միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար նախորդ տարի ծախսվել է 795,2 մլն. դրամ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատվիրատվությամբ 95,5 մլն դրամի չափով աշխատանքներ են կատարվել Արաքս գետի ափապաշտպան միջոցառումների իրականացման նպատակով:

Հասարակական տրանսպորտի աշխատանքներն անվտանգ կազմակերպելու և բարելավելու նպատակով ներմարզային 2 երթուղիներում ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության համար կազմակերպվել և սահմանված կարգով անց են կացվել նոր մրցույթներ, կնքվել համապատասխան պայմանագրեր:

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

2011թ ընթացքում մարզում գյուղատնտեսությամբ զբաղվել են 18026 գյուղացիական և ֆերմերային տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ և արտադրությամբ՝ 58 գյուղատնտեսական կազմակերպություններ:

2011թ-ին գարնանային ցրտահարությունները, կարկտահարությունը, երկարատև անձրևները, ջերմաստիճանի կտրուկ իջեցումը բացասական ազդեցություն են թողել գյուղատնտեսական մթերքների արտադրության վրա: Մարզի բոլոր համայնքներում գյուղացիական տնտեսությունները և ֆերմերները կրել են զգալի վնաս:

Մարզի 2010-2011թթ. բուսաբուծության և անասնապահության բնագավառներում գյուղատնտեսական արտադրության վերաբերյալ ցուցանիշները ներկայացվում են ստորև.

Ցուցանիշների անվանումը	Չափի միավոր	2010թ	2011թ	Համեմատական տոկոսը
1	2	3	4	5
Հնձվել է հացահատիկ	Հեկտար	17953	20353	113.3
Արտադրվել է՝				
Հացահատիկ	Ցենտներ	140806	383211	272.1
Կարտոֆիլ	Ցենտներ	236464	276174	116.4
Բանջարեղեն	Ցենտներ	151395	157795	104.2

Պտուղ-հատապտուղ	Ցենտներ	29848	116117	389.0
Կուտակվել է խոտ	Հազ.տոննա	92.7	101.1	109
Կուտակվել է ծղոտ	Հազ.տոննա	9.2	19.2	227.6
Ցանվել է աշնանացան	Հեկտար	10288	14124	137.2
Կատարվել է ցրտահերկ	Հեկտար	2200	3000	136.3
Արտադրվել է՝				
Կաթ	Հազ.տոննա	56.8	58.3	102.6
Միս	Հազ.տոննա	9.98	10.1	101.2
Բուրդ	Տոննա	68.9	69.9	101.4
Մեղր	Տոննա	374	380	101.6
Զուլ	Մլն.հատ	24953	28100	112.6

Մարզում 2011թ. բերքի տակ է դրվել 29848հա ցանքային տարածություններ, որից 20353հա հացահատիկային մշակաբույսեր, 374.1հ հատիկաընդեղային մշակաբույսեր, 1677հա կարտոֆիլ, 971.7հա բանջարա-բոստանային մշակաբույսեր, 5505.5հա կերային մշակաբույսեր: Պտղի և հատապտղի ցանքատարածությունները կազմել են 2587հա, իսկ խաղողը՝ 184.8հա:

2011թ. աշնանացանը կազմել է 14124 և կատարվել է ցրտահերկ՝ 3000հա /2010թ. համապատասխանաբար՝ 10288հա աշնանացան և 2200հա ցրտահերկ/:

2011թ. մարզից արտահանվել է 3100տ կարտոֆիլ, 980տ կաղամբ, 860տ աշնանացան ցորենի սերմացու, 200տ տարբեր տեսակի ձավարեղեն:

Մարզի ԶՕԸ-ի ուժերով գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին մատակարարվել է 4.44 մլն.խ.մ. ջուր, ոռոգման վարձավճարների գանձումները կազմել է 94.5% անցած տարվա 89.3%-ի փոխարեն: Փաստենք, որ Գորիսի ԶՕԸ-ի կողմից պոմպակայանը ուշ է շահագործվել, Հարթաշենի համայնքում տեղի ունեցած վթարի հետևանքով:

Ստորև ներկայացվում է վարձավճարների գանձումը ըստ տարիների.

Ընդամենը մարզում	Ոռոգված հողատարածքը /հա/	Մատակարարված ջրի քանակը /հազ.խմ/	Հասույթը /հազ.դրամ	Փասատացի գանձված վարրձավճար.	Ապառաքը /հազ.դրամ/	Տոկոսը %
2010թ	1396.5	3992.9	43921.9	39206.0	4715.9	89.3
2011թ	1468	4449.0	48939.0	42246.0	2639.0	94.5

Զգալի ներդրումներ են կատարվել ոռոգման համակարգերի վերականգնման և հիմնանորոգման ուղղությամբ, մասնավորապես՝

- ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ «Գեղի-Եղվարդ» ոռոգման ջրատարի Լեռնաձոր համայնքի տարածքում կատարվել է ջրատարի վերանորոգման աշխատանքները 5.65 մլն. դրամ արժողությամբ.

- «Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ Հայաստան»-ի միջոցներով ավելի քան 1,0 մլրդ. դրամի աշխատանքներ են կատարվել մարզի ոռոգման համակարգերի վերականգնման ուղղությամբ, որից 814,3 մլն. դրամն ուղղվել է Որոտան-2 պոմպակայանի, 24,2 մլն. դրամը՝ Կապանի տարածաշրջանի, 132,9 մլն.

դրամը՝ Գորիսի տարածաշրջանի և 31,9 մլն. դրամը՝ Ախլաթյանի ներտնտեսային ցանցերի վերականգնմանը:

2011թ. մարզում պահպանվել է խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը, ավելացել է թռչնի և մեղվաընտանիքների քանակը:

Անասնաբուժական ծառայության հետ համատեղ վերահսկվել և համակարգվել են գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները:

Տարվա ընթացքում արձանագրվել են խոշոր եղջերավոր անասունների 141 գլուխ բրուցելոզի, 6 գլուխ տուբերկուլոզի, 151 գլուխ խոզերի աֆրիկական ժանտախտի հիվանդություններ:

Կատարվել են դիագնոստիկ ստուգումներ տուբերկուլոզ և բրուցելոզ հիվանդությունների, պրոֆիլակտիկ միջոցառումներ՝ սիբիրախտ, պաստերիոզ, էմկար, խոզերի ժանտախտ, թռչունների ժանտախտ, մեղուների վարիատոզ հիվանդությունների դեմ: Նշված աշխատանքների իրականացման լիարժեքությանը խոչնդոտ են հանդիսացել Սիսիանի լաբորատորիայի չաշխատելու հանգամանքը, տուբերկուլինի բացակայությունը, հակահամաճարակային վակցինայի սակավությունը: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ժամանակին չեն հատկացվել բոլոր անհրաժեշտ արեպարատները:

Ստորև ներկայացվում է տեղեկանք 2011թ կատարած հակահամաճարակային և պրոֆիլակտիկ միջոցառումների մասին:

/Աղյուսակ 4/

N	Միջոցառումների անվանումը	Գորիս	Սիսիան	Կապան	Մեղրի	Ընդամենը
1	Բրուցելյոզ Խ.Ե.Կ	23173	7786	10090	1344	42393
2	Տուբերկյոզ Խ.Ե.Կ	5391	3451	2156	294	11292
3	Սիբիրախտ Խ.Ե.Կ	42025	32656	17831	2350	94862
4	Պաստերելյոզ ԽԵԿ	1295	654	326	0	2275
5	Դաբաղ ԽԵԿ	60788	38321	27222	4325	130656
6	Էմկար ԽԵԿ	43898	26770	16778	2493	89939
7	Բրուցելյոզ Մ.Ե.Կ	10342	0	8818	1993	21153
8	Սիբիրախտ Մ.Ե.Կ	37170	18460	8468	2332	66430
9	Դաբաղ Մ.Ե.Կ	38022	0	7782	2008	47812
10	Ժանտախտ խոզերի	15345	10969	13506	2352	42172
11	Ժանտախտ թռչունների	48796	26560	27908	6586	109850

Մարզում գործում է 3 տոհմային տնտեսություն: Տարվա ընթացքում կատարվել է 1600գլուխ խոշոր եղջերավոր անասունների արհեստական սերմնավորում, որը անցյալ տարվա համեմատ ավել է 400գլխով:

Գյուղատնտեսական առկա տեխնիկական հիմնականում մաշված է, հիմնախնդիր է նոր տեխնիկայով համալրումը և առկա հավաքակազմի արդիականացումը

Ճապոնական դրամաշնորհով Հայաստանի Հանրապետությանը տրամադրված գյուղտեխնիկայից մարզ է ներկրվել 3 միավոր տրակտոր՝ համապատասխան գործիքներով:

Ստորև ներկայացվում է 2011թ. գյուղատնտեսական տեխնիկայի առկա քանակը՝ ըստ մակնիշների

Սյունիքի մարզ	Հացահատիկահավաք կոմբայն	Կերտահավաք կոմբայն	Անիվավոր տրակտորներ										Թրթուրավոր տրակտորներ					ԸՆԴԱՄԵՆԸ	
			K-700,701	T-150k	MT 80,82	MT -50,52	M -6L	T-40	T-16,T-25	ժ0-2621	SAME	Ընդամենը	T-330 T-170,	T-74, DT-75	T-54, T-70	DZ-42	այլ մակնիշի		Ընդամենը
Ընդամենը	151	27	11	61	338	46	109	68	27	55	18	733	24	214	8	15	0	261	994

Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, վերամշակող կազմակերպությունների և ոլորտի կայուն զարգացման ապահովման համար դեռևս լուրջ խնդիր է մնում գյուղմթերքների իրացումը, հացահատիկային մշակաբույսերի որակյալ սերմանյութի, դիզ.վառելանյութի և ազոտական պարարտանյութի ձեռք բերման հարցերը:

Անհրաժեշտ ուշադրություն է դարձվել բնության և շրջակա միջավայրի պահպանությանը, ցուցաբերվել աջակցություն բնապահպանական օրենսդրության կատարմանը, արգելանոցների և արգելավայրերի պահպանմանը և օգտագործմանը, ապահովվել համագործակցություն բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների և մարզի Օրհուս բնապահպանական տեղեկատվական հասարակական կենտրոնների հետ:

Բնապահպանական տեսչության Սյունիքի տարածքային բաժնի և ջրային ռեսուրսների գործակալության հարավային ջրավազանային տարածքային կառավարման բաժնի հետ համատեղ կազմակերպվել է ստուգայցեր և ուսումնասիրություններ, որի արդյունքում առաջացած խնդիրներին տրվել է համապատասխան լուծումներ:

Աջակցություն է ցուցաբերվել «Սոսու Պուրակ» պետական արգելավայրի կենսաբազմազանության ապահովման և կայուն զարգացմանը: Տնկարանից 3670 տնկիներ են տեղափոխվել և 5 հա-ի վրա կատարվել անտառալրացում: Տնկարանում ազատված մակերեսը լրացվեց 3300 հատ սոսու տնկանյութով: Տնկվել են 2-3 տարեկան 1740 տնկիներ՝ 1600 արևելյան սոսի և 140 ընկուզենի:

Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ հաշվետու ժամանակահատվածում համատեղ աշխատանքներ են տարվել մարզի ֆլորայի և ֆաունայի պահպանման և վերարտադրման, ինչպես նաև իրավախախտումների կանխման ուղղությամբ:

Համակարգված աշխատանքներ են տարվել բնօգտագործման և բնապահպանական վճարների պատշաճ կարգով վճարումներն ապահովելու, ոլորտում արձանագրված իրավախախտումներից գոյացած վարչական տուգանքները պետբյուջե

մուտքագրելու ուղղությամբ (հաշվարկված վնասների և պատժամիջոցների դիմաց 2011 թվականի ընթացքում պետբյուջե է մուտքագրվել մոտ 13.2 մլն. դրամ):

2011թ ընթացքում անհրաժեշտ վերահսկողություն է իրականացվել մարզային ենթակայության կառույցների կողմից կամ իրենց տնօրինության տակ գտնվող տարածքներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ:

Աշխատանքներ են տարվել համայնքների ընդհանուր օգտագործման տարածքներում ապօրինի ծառահատումների, աղբակույտերի և արտադրական թափոնների տեղափոխման ուղղությամբ: Տեղական ծրագրեր են մշակվել նաև գյուղական համայնքներում ծառատնկումների կազմակերպման, փողոցների մաքրման ուղղությամբ: Համատեղ իրականացված ստուգայցերի արդյունքում համայնքների ընդհանուր օգտագործման հողային տարածքներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման խախտումներ չեն արձանագրվել:

Սահմանված պարբերականությամբ (ամիսը 3 անգամ) սպասարկող մարզային կազմակերպությունների կողմից մարզի միջպետական, ինչպես նաև զբոսաշրջային կենտրոններ (Տաթևի վանական համալիր, ճոպանուղի, Վահանավանք և այլն) տանող հանրապետական նշանակության ճանապարհները և դրան հարակից տարածքներում կատարվում են սանիտարական մաքրման աշխատանքներ: Ճանապարհների բնակավայրերի և մարդաշատ հատվածներում տեղադրվել են աղբարկղներ: Կատարված աշխատանքների արդյունքում ճանապարհների սանիտարական վիճակը գտնվում է բարվոք վիճակում, սահմանված կարգով վերահսկվում:

Մարզի 42 հանքավայրերից շահագործվում է 27-ը, մնացած 15 հանքավայրերում չնայած համապատասխան թույլտվությունների /լիցենզիաների/ առկայությանը, գործունեություն չի իրականացվում:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Մարզում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել է վերահսկողություն հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, կանխվել, կասեցվել և վերացվել է նկատված ապօրինի հողօգտագործումները:

Մարզի 43.8 հազ.հա գյուղնշանակության վարելահողերից 2011թ. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակով օգտագործվել է 36.7 հազ.հա /83.7%/: Բարձրադիր գոտիներում գտնվելու և մեծ թեքություններ ունենալու և տնտեսապես անշահավետ լինելու պատճառներով համայնքներում չի օգտագործվել մոտ 7.1 հազ.հա վարելահող, այդ թվում 6.0 հազ.հա պետական և համայնքային սեփականության:

Համայնքների վարչական տարածքներում գյուղատնտեսական նշանակության վարելահողերի 27.5%-ը /12084հա/, այգիների 19.6%-ը /207հա/, խոտհարքների 54.2%-ը /4479հա/, արոտների 99.9%-ը /147400հա/ դեռևս մնում են պետական կամ համայնքային սեփականության: Համայնքներում ընդհանուր առմամբ 2011թ-ի ընթացքում գյուղատնտեսական նշանակության հողերից հողօգտագործողներին

վարձակալությամբ հատկացված է 37.5 հազ. հա հողամաս՝ տարեկան 134.1 մլն դրամ վարձավճարով: 2011 թվականի վարձավճարի /ներառյալ ապառքներ/ գանձումները կազմել է 130.1 մլն. դրամ կամ 97.0%: Վարձավճարների գծով խոշոր ապառքներ ունեն միայն «ԲԱՄՕ-մետալ» և «Գ.Արշակյան» ՍՊԸ-ները՝ 100 մլն դրամ ընդհանուր գումարով:

ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության 2003թ-ի դեկտեմբերի 24-ի N1746-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» 2011թ. ապրիլի 7-ի N360-Ն, օգոստոսի 25-ի N1232-Ն որոշումներով պայմանավորված համապատասխան համայնքների ղեկավարների կողմից վերակնքվել կամ հաշվարկված վարձավճարների մասով վերանայվել են մետաղական հանքավայրեր շահագործող տնտեսվարողների հետ կնքված հողամասերի օգտագործման պայմանագրերը: Նշված գործառույթների արդյունքում թվով 14 համայնքների /10 գյուղական/ տեղական բյուջեներ լրացուցիչ տարեկան կնուտքագրվեն ավել քան 124մլն դրամ վարձավճար:

2011թ. վարչական հսկողության աշխատանքների շրջանակներում մարզի թվով 20 գյուղական համայնքներում իրականացվել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հողային օրենսդրության կատարման հսկողություն: Նշված աշխատանքների արդյունքում արձանագրված թերությունները վերացնելու նպատակով տրվել համապատասխան ցուցումներ, որոնք կատարվել են ամբողջությամբ:

2011թ. ընթացքում մարզի 15 համայնքներում /5 քաղաքային, 10 գյուղական/ համայնքային սեփականության հողերից, աճուրդ-վաճառքի կարգով օտարվել է 42.0 հա հողամաս, որից 37.8 հա-ը գյուղատնտեսական նշանակության, կամ 4.7 հա-ով պակաս քան 2010թ-ին: Հողերի օտարումից մուտքերը կազմել են 43.2 մլն. դրամ /օտարված հողամասերի կադաստրային արժեքների հանրագումարը գերազանցվել է 12.68 մլն.դրամով/, այդ թվում քաղաքային համայնքներում՝ 23.2 մլն.դրամ: Գյուղական համայնքների ֆոնդային բյուջեներ մուտքագրված գումարները դեռևս բավարար չեն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 3-րդ կետով նշված՝ գյուղական համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմման համար: Առաջիկայում լրացուցիչ մուտքերի դեպքում գումարները կուղվեն նշված աշխատանքների իրականացման համար /քաղաքային համայնքները ունեն հաստատված քաղաքաշինական փաստաթղթեր/:

2011թ. կազմվել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովին են առաքվել մարզի թվով 24 համայնքներում հողերի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ նյութեր: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից բացասական եզրակացությամբ նյութեր հետ չեն առաքվել: 2011թ. ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով թվով 18 համայնքներում փոփոխվել են 23.7 հա հողամասերի նպատակային նշանակությունները, որոնք օգտագործվելու են պաշտպանական, մշակութային, արդյունաբերական և զբոսաշրջության զարգացման նպատակներով:

2011թ. մասնավոր սեփականության 0.1 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության արդյունքում՝ որպես կադաստրային արժեքների տարբերություն համապատասխան համայնքի բյուջե է մուտքագրվել 120 հազ.դրամ գումար:

2011թ. ընթացքում քաղաքացիների դիմումների քննարկման արդյունքում համաձայն ՀՀ կառավարության «ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N1066-Ն որոշման դրույթների, համապատասխան մարզային հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն՝ թվով 49 քաղաքացիների սեփականություն հանդիսացող 42.0 հա բարձարժեք գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու մասին:

Առողջապահության բնագավառ

Հաշվետու տարում հատուկ ուշադրության կենտրոնում են եղել մարզում գործող առողջապահական կառույցների համաչափ զարգացման, բնագավառում ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման, առողջության առաջնային պահպանման որակի, մոր և մանկան առողջության, ծննդօգնության մակարդակի, շտապ օգնության որակի ու մատչելիության բարձրացման հարցերը:

Ոլորտում գործում է 17 ՓԲԸ, որոնք պետական պատվերի շրջանակներում իրականացնում են արտահիվանդանոցային, հիվանդանոցային և մասնագիտական /նյարդահոգեբուժական/ դիսպասերային բուժօգնություն: Մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների պետական պատվերի գլոբալ բյուջեն կազմել է մոտ 1.7 մլրդ դրամ, որից 913.0 մլն դրամ արտահիվանդանոցային և 759.0 մլն. դրամ հիվանդանոցային ծառայությունների գծով: 2011 թվականի դեկտեմբերի 22-ի դրությամբ պետական պատվերի գլոբալ բյուջեի կատարողականը կազմել է 99.8%: Ֆինանսական փոխհատուցումը իրականացվել է 100%:

2011 թվականին վճարովի հիմունքներով բուժվել է 757 հիվանդ, իսկ ծառայություններից մուտքագրվել է մոտ 80 մլն. դրամ:

2011 թվականին մարզում համավճարի սկզբունքով բուժվել են 470 հիվանդ, համավճարի սկզբունքի կիրառմամբ մուտքագրվել է 21.2 մլն. դրամ:

Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում աշխատում է 1337 մարդ, որից 270 բժիշկ, 689 միջին և կրտսեր բուժաշխատող:

Բուժհաստատությունների կողմից 10000 բնակչի հաշվով սպասարկումն իրականացվում է 18 բժշկով, 45 միջին բուժաշխատողով:

Ստացիոնար բժշկական հաստատություններում ծավալված է 420 մահճակալ:

2011 թվականին մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհաստատություններում ծնվել է 1537 երեխա, 270 / 17.5% / դեպքում ծննդալուծումը իրականացվել է կեսարյան հատմամբ: Մարզում 2011 թվականին գրանցվել են 1604 /2010թ.՝ 1736/ նորածիններ և մարզում ծնելիության ցուցանիշը կազմել է 10.5 պրոմիլե: Ծննդօգնությունը 96.5 %-ով իրականացվել է մարզի բժշկական կենտրոններում: Մարզպետարանի միջնորդությամբ ծննդօգնության պետական հավաստագիր է տրամադրվել 70 կանանց, որոնցից 55-ը ԼՂՀ Քաշաթաղի շրջանի բնակիչների:

Բարձր ռիսկի 62 հղիներ հղիության ավստաբանական ընթացքի պատճառով ծննդօգնությունը 3-րդ մակարդակի բուժհաստատություններում կազմակերպելու և իրականացնելու նպատակով ուղեգրվել են Երևան:

Մանկական մահացությունը կազմել է 8.1 իսկ պերինատալ մահացությունը՝ 14.8 պրոմիլե:

2011 թվականին մահացել է 1278 մարդ /2010թ՝ 1243/, մահացության ցուցանիշը կազմել է 8.4 պրոմիլե: Բնական աճը կազմել է 2.1 պրոմիլե:

Ծնունդների և մահերի թիվը ըստ տարածաշրջանների ունի հետևյալ պատկերը

Տարածաշրջան	Ծնունդ 2010թ.		Ծնունդ 2011թ.		Մահերի թ. 2010թ.		Մահերի թ. 2011թ.		0-1 տ. երեխաների մահեր 2010թ.	0-1տ. երեխաների մահեր 2011թ.
	ծննդոգ ցուցաբերողներ. տվ.	ՔԿԱԳԾ- գրանցված	ծննդոգ ցուցաբերողներ. տվ.	ՔԿԱԳԾ- գրանցված	ընկեր.տվ	ՔԿԱԳԾ- գրանցված	ընկեր. տվ	ՔԿԱԳԾ- գրանցված		
Կապան	485	485	436	441	375	426	361	422	11	5
Քաջարան	70	105	83	97	60	63	83	84	1	1
Սիսիան	369	409	308	374	241	281	197	273	-	1
Գորիս	575	587	559	525	339	363	380	381	4	-
Մեղրի	144	150	162	167	110	110	123	118	1	6
ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՐԶՈՒՄ	1664	1736	1548	1604	1125	1243	1144	1278	17	13

Մարզի հինգ բժշկական կենտրոնների և նյարդահոգեբուժական դիսպանսերի հիվանդանոցային ծառայություններից 2011 թվականի օգտվել են 9175 /2010 թվականին 8100/ հիվանդ, որոնցից վիրահատության են ենթարկվել 1544 մարդ, այդ թվում՝ պլանային կարգով՝ 762 , իսկ անհետաձգելի վիճակներով պայմանավորված՝ 782 հիվանդ: Հիմնականում հիվանդանոցային բուժօգնության ծավալը ավելացել է «Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ն հաշվին, պայմանավորված վերջինիս հիվանդանոցային ծառայության արդիականացման հետ: Մահճակալ օրերի թիվն է 92764 (2010թ-ին՝ 86952): Մահճակալների միջին զբաղվածությունը կազմել է 60.3 % (2010թ-ին՝ 57.2%) Սոցիալական անապահով խմբերում չընդգրկված, սակայն ծանր սոցիալական վիճակում գտնվող մարզի 285 բնակիչներ մարզպետի միջնորդությամբ ուղեգրվել են Երևան /95 հոգի/ և մարզի այլ բուժհաստատություններ /190 հիվանդ՝ 2%/՝ ախտորոշումն ճշտելու և բուժվելու նպատակով:

Հիվանդանոցային մահաբերությունը կազմել է 0.9%:

Պոլիկլինիկաներում և առողջության առաջնային պահպանման կենտրոններում (ԱԱՊ) հաճախումների թիվը կազմել է 537519 (2010 թ-ին՝ 550128),մեկ բնակչին ընկնող հաճախումների թիվը՝ 3.5, պրոֆիլակտիկ պատվաստումների ենթարկված երեխաների ընդգրկվածության ցուցանիշը կազմում է 93.8 տոկոս (2010 թ-ին՝92.8): Հատուկ ուշադրություն է դարձվել ԱԱՊ բժշկների կողմից բնակչության առողջ ապրելակերպի կրթմանն ուղղված աշխատանքներին:

Դիսպանսեր հսկողության տակ գտնվում է 19539 մարդ (2010 թ-ին՝ 18305 մարդ). այդ թվում՝ սիրտ-անոթային հիվանդություններով 2582 (2010 թ-ին՝ 2045), էնդոկրին հիվանդություններով 3797 (2010թ-ին՝ 4196), օնկոլոգիական հիվանդություններով 1122 (2010թ-ին՝ 1052), մաշկավեներոլոգիական հիվանդություններով 233 (2010 թ-ին՝ 262), տուբերկուլոզով 343 (2010թ-ին՝289) և հոգեկան շեղումներով 2479 (2010 թ-ին՝2476) հիվադ:

Առողջարանային-վերականգնողական բուժման են ուղեգրվել հաշմանդամության խումբ ունեցող 63 բնակիչ և Հայրենական մեծ պատերազմի վետերաններ, այդ թվում նաև 5 հաշմանդամ երեխա:

Կազմակերպվել է անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովման գործընթացը: ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել և բաշխվել է կենտրոնացված գնումներով և հումանիտար օգնությամբ ձեռք բերված 177.524.591 հազար դրամի դեղորայք: 2011 թվականին մարզի բուժհաստատությունների կողմից հիվանդներին տրամադրվել է 54930569 հազար դրամի անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայք:

2011 թվականին շտապ օգնության ծառայությունը իրականացրել է 17623 կանչ /2010թ. 15594 դիմաց/, ավելացել է գյուղական վայրերից ստացված և սպասարկված կանչերի թիվը /2010 թվականի համեմատ այն աճել է 8.5 %/: Այս հանգամանքը խոսում է գյուղական բնակչության համար շտապ օգնության ծառայության մատչելիության բարձրացման մասին, ինչը կապված է շտապ օգնության ծառայության բարեփոխումների հետ:

Անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվել առողջապահական համակարգի օպտիմալացման ծրագրերի իրականացման ուղղությամբ:

2006թ. նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911 որոշմամբ նախատեսված մարզի առողջապահական ընկերություններում կառուցվածքային և կազմակերպական փոփոխություններն իրականացվել են գրեթե ամբողջությամբ:

2011թ. սկսվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագրերի շրջանակներում «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հիվանդանոցային համալիրի, «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ արդիականացման ծրագրի իրականացումը:

2011 թվականին սկսվել է «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցման աշխատանքները և բժշկական կենտրոնը կկենտրոնացվի մեկ մասնաշենքում:

«Գորիսի ԲԿ» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքում համապատասխան վերանորոգում իրականացնելուց և պահաջվող սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանեցնելուց հետո հակատուբերկուլոզային ծառայությունները /ստացիոնար, լաբորատորիա, հակատուբերկուլոզային կաբինետ/ 2012 թ-ին կտեղափոխվեն պոլիկլինիկական մասնաշենք:

«Քաջարանի ԲԿ» և «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ԲԲԸ, ինչպես նաև «Կապանի ԲԿ» և «Դինո Գոլգ Մայնինգ Քամփանի» ԲԲԸ, «Մեղրու տարածաշրջանային ԲԿ» և «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ միջև կնքվել են վերոհիշյալ ընկերությունների աշխատողների բուժսպասարկման պայմանագրեր, որի արդյունքում հիմնականում ապահովվել է առողջապահական ընկերությունների արտաբյուջետային ֆինանսական միջոցների հոսքը:

Սկսվել է «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկական մասնաշենքի վերակառուցման աշխատանքները, որն ամբողջությամբ իրականացվում է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ ֆինանսական միջոցների

հաշվին /նախագծա-նախահաշվաին և շինարարական ծախսերը կազմում են մոտ 554.0 մլն դրամ/:

Մարզպետարանը, որպես պատվիրատու, սկսել է «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ պոլիկլինիկական մասնաշենքի հիմնանորոգումը, որի նախահաշվարկային գումարը կազմում է 19 մլն դրամ:

«Հայաստան» համահայկան հիմնադրամի միջոցով իրականացվել է «Կապանի ԲԿ» ՓԲԸ մանկական մասնաշենքի հիմնանորոգումը և հագեցումը անհրաժեշտ սարքավորումներով և գույքով:

Մարզում ստեղծվել է մարզային բժշկական մասնագիտական խումբ, որի կազմում ընդգրկվել են մարզի բժշկական հաստատությունների բարձր մասնագիտական որակավորում ունեցող բժիշկները: Այս խումբը 2011 թվականի ընթացքում, համաձայն ժամանակացույցի իրականացրել է «Բաց դռների օր» միջոցառումներ մարզի տարածաշրջաններում գործող բոլոր առողջապահական ընկերություններում: Միջոցառումների շրջանակներում հետազոտվել է 1700 մարդ, իսկ 58 հիվանդների տրվել է միջնորդագիր հիվանդանոցային պայմաններում անվճար բուժօգնություն ստանալու համար: Արտագնա այցելությունները կրելու են շարունակական բնույթ:

Մարզպետի նախաձեռնությամբ Կապանի, Գորիսի և Սիսիանի բժշկական կենտրոնների մասնագետների մասնակցությամբ 2011 թ. երկու անգամ իրականացվել են «Բաց դռների օր» միջոցառումներ ԼՂՀ Քաշաթաղի շրջանում, որի ընթացքում իրականացվել են նաև այցելություններ տարածաշրջանի գյուղական վայրեր: Ակցիաի շրջանակներում սպասարկվել են 471 մարդ, հիվանդանոցային բուժօգնություն ստանալու նպատակով 29 հիվանդ ուղեգրվել են մարզի բժշկական կենտրոններ անվճար վիրահատվելու կամ ստացիոնար բուժում ստանալու համար:

«Առողջության պահպանման Սյունիքի հիմնադրամ» ԲՀԿ կողմից եռամսյակային պարբերականությամբ մարզի բոլոր տարածաշրջանների ԲՄԿ տրամադրվում են առաջին բուժօգնության համար դեղեր և բժշկական պարագաներ

2011 թվականի ընթացքում բժշկական բարձր որակավորում ունեցող մասնագետներ /ռենտգենոլոգ, գինեկոլոգներ /2/, վիրաբույժ և թերապևտ/ հրավիրվել են ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիանի ԲԿ», «Կապանի ԲԿ», «Մեղրու տարածաշրջանային ԲԿ» ՓԲԸ ժամանակավոր աշխատելու համար: Մասնագետների համար ապահովվել են բավարար կենցաղային և են արտոնյալ աշխատանքային պայմաններ

Կազմակերպվել են հանդիպումներ բժշկական համալսարանի ավարտական կուրսերում սովորող ուսանողների հետ:

2011 թվականին կնքվել է եռակողմ պայմանագիր ՀՀ Սյունիքի մարզպետարանի, Մ.Հերացու անվան բժշկական համալսարանի տեղաբնակ 2 նորավարտ բժիշկների և ՀՀ առողջապահության նախարարության հետ անվճար մասնագիտացման ուսուցում կազմակերպելու վերաբերյալ:

Ներկայումս մարզպետի միջնորդությամբ պայմանագիր կնքած 11 նորավարտ բժիշկներ մասնագիտացման դասընթացներ են անցնում ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտում:

Մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրված է 2011 թվականին մարզի բժշկական հաստատություններում առկա թափուր պաշտոնների վերաբերյալ տեղեկատվությունը:

2011 թվականի մարզի առողջապահական հաստատությունները չունեն կրեդիտորական պարտքեր, այդ թվում աշխատավարձի և սոցվճարների գծով:

Ոլորտում որպես կարևոր հիմնախնդիր մնում է բժշկական կադրերով ապահովվածության խնդիրը:

Սոցիալական ապահովության բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում բնակչության պետական սոցիալական ապահովության տարածքային քաղաքականությունն ապահովվել է սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների գործունեության կազմակերպման, սոցիալական ոլորտի հանրապետական գործադիր մարմինների ենթակայության տարածքային ծառայությունների գործունեության համակարգման, բնակչության սոցիալապես անապահով ընտանիքների հաշվառման, բնակչության զբաղվածության ծրագրերի իրականացման միջոցով:

Բնակչության սոցիալական ապահովության բնագավառում կարևոր նշանակություն ունի պետական նպաստների տրամադրումը, որը նպատակաուղղված է աղքատ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանը:

2011թ ընթացքում ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների թիվը նվազել է: 2011թ հունվար ամսին ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվել են 3771 ընտանիք, 2011թ դեկտեմբերին՝ 2889 ընտանիք: Ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կազմել է 24800 դրամ:

Ընտանեկան նպաստի համակարգից դուրս մնացած 882 կարիքավոր ընտանիքների սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին կից գործող սոցիալական աջակցության խորհուրդների առաջարկությամբ նշանակվել է եռամսյա հրատապ օգնություն՝ ամսական 13500 դրամի չափով:

Տարվա ընթացքում ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացված միջոցների հասցեականության ապահովման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Տեղեկատվական բազաների համադրմամբ և կատարված ուսումնասիրությունների արդյունքով արձանագրված գերավճար գումարները սահմանված կարգով հետ է գանձվում պետական բյուջե:

ՀՀ կառավարության 23.12.2010թ. N1763-Ն որոշմամբ հաստատված ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառման (փաստագրման) ժամանակ փաստաթղթերի ներկայացման նոր կարգի համաձայն, իրականացվել է համագործակցված աշխատանք սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային գործակալությունների, ոստիկանության բնակչության տեղական ռեգիստրը վարող տարածքային մարմնի, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

Սեղմ ժամկետում կազմակերպվել է 2011 թվականի համար համայնքի ղեկավարի և համայնքում անասնահամաճարակային միջոցառումներ իրականացնող անասնաբույժի կամ համայնքի անասնաբուժական ծառայություն իրականացնող անձի հետ կնքած

պայմանագրի մեկ օրինակի տրամադրումը սոցիալական ծառայության տարածքային գործակալություններին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցված աշխատանքի արդյունքում հնարավոր է եղել ՄԾՏԳ-ների համար ապահովելու «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքների կիրառումն ապահովող իրավական ակտերով նախատեսված գործառույթների պատշաճ կատարումը:

Որոշակի աշխատանքներ է իրականացվել «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի իրագործման ուղղությամբ:

Ծրագրերի իրականացման համար ՀՀ կառավարությունը մարզին հատկացրել էր 61.1 մլն. դրամ: Հաստատվել էր ՀՀ Սյունիքի մարզի պատվիրատուների կողմից «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերով ՀՀ Սյունիքի մարզի համայնքներին հատկացված ֆինանսական միջոցների բաշխման ցանկը և իրականացվող աշխատանքների ժամանակացույցը: Գումարը տրվել էր մարզի 52 համայնքների, որոնք ծրագրերը պետք է իրականացնեին մարտ – հոկտեմբեր ամիսների ընթացքում: Նշված ծրագրերի իրականացման միջոցով հնարավոր կլիներ բարձրացնել զբաղվածության արդյունավետությունը, մեծացնելու գործազուրկների համար աշխատանքի հնարավորությունները, սակայն վերոհիշյալ ծրագրերից իրականացվել է մայն 15 ծրագիր՝ 9.7 մլն. դրամ ընդհանուր արժեքով, քանի որ կառավարության համապատասխան որոշումով և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 24 մայիսի 2011թ. N43-Ա/11 հրամանով կասեցվել է ծրագրերի հետագա իրականացումը:

Զբաղվածության չորս տարածքային կենտրոններում գրանցված է 4871 /2010-ին 7076/ աշխատանք փնտրող քաղաքացի, որից 4690 /2010թ-ին 5272/ ունի գործազուրկի կարգավիճակ:

2011թ-ին կենսաթոշակները վճարվել են առանց ուշացումների: Մարզի կենսաթոշակառուների թիվը կազմել է 25410 մարդ, միջին ամսական թոշակը՝ 29600 դրամ:

«Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված հատկացումների հաշվին, Սյունիքի մարզպետարան դիմած 961 քաղաքացիներից 856-ին տրվել է դրամական օգնություն 20-50 հազար դրամի շրջանակներում:

ՀՀ Սյունիքի մարզպետի միջնորդությամբ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի միջոցներով արցախյան ազատամարտի 576 զոհված ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին տրամադրվել է 15 հազ.դրամ օգնություն:

Սկսվել և շարունակվում է մարզի կարիքավոր 4309 ընտանիքներին բուսական յուղի բաշխման գործընթացը:

Տարվա ընթացքում մարզի հաշմանդամները մշտապես գտնվել են մարզպետի և հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Սյունիքի մարզային հանձնաժողովի ուշադրության կենտրոնում: Հաշվետու տարում 63 հաշմանդամների

անվճար հատկացվել է առողջարանային ուղեգրեր, որոնցից 5-ը մանկուց հաշմանդամների: Կազմակերպվել է «Պրոթեզաօրդոպետիկ» ՍՊԸ-ի աշխատակիցների այցը մարզ, որոնց միջոցով մարզի 400 հաշմանդամների հատկացվել է 47 լսողական սարք, 122 պրոթեզի կոշիկ, 165 կոշիկի ներդիր, 39 ձեռնափայտ, 26 հենակ, 1քայլակ:

2011թ. ընթացքում տեղի է ունեցել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Սյունիքի մարզային հանձնաժողովի 6 նիստ, որտեղ քննարկվել են մարզի հաշմանդամների հիմնախնդիրներին վերաբերող հարցեր:

Մարզի գերակա խնդիրներից մեկը մնում է սոցիալապես անապահով խավի բնակարանային ապահովության խնդիրը: Շարունակվում է «Սոցիալական տուն աջակից պայմաններով» ծրագրի հիմնական՝ «Գորիս-2» փուլը, որը իրականացվում է Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալության և Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորումով: Այս փուլում լուծում կստանա սոցիալապես անապահով, վազոն տնակներում բնակվող 22 ընտանիքների բնակարանային ապահովության հարցը: Ծրագիրը միաժամանակ նպատակ ունի ուժեղացնելու համայնքային իշխանությունների կարողությունը սոցիալական աշխատանքի բնագավառում:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ

Համակարգված աշխատանքներ են իրականացվել ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի կատարման ապահովման ուղղությամբ:

Ոլորտի հարաբերությունները կարգավորող համապատասխան իրավական ակտերի վերաբերյալ կազմվել են շրջաբերականներ և ուղարկվել մարզի բոլոր համայնքներ:

Մարզում հաշվառվել են առանց ծնողական խնամքի մնացած 8 երեխա և առանց ծնողական խնամքի մնացած անձանց թվին պատկանող 1 անձ: Որպես որդեգրողի թեկնածուներ հաշվառվել է 10 անձ: Որդեգրման ենթակա երեխաների թիվը 4 է, որոնք որդեգրվել են հարազատների կողմից: Չկան երեխայի լքման դեպքեր:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 63 երեխայի տրվել է վկայագիր, խնամքի հաստատությունից դուրս է գրվել 39 և ընդունվել է 23 երեխա:

Մանկատանը տեղավորելու համար տրվել է 4 եզրակացություն:

Շարունակվել է համագործակցությունը Հայ օգնության ֆոնդի հետ՝ մարզի միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին հովանավորչական ծրագրում ընդգրկելու համար: 265 երեխա ընդգրկված է ծրագրում և տարվա մեջ 2 անգամ ստանում է ֆինանսական աջակցություն:

Նույն ծրագրում ընդգրկված 50 երեխայի ամառային հանգիստը կազմակերպվել է «Սիրանույշ» մանկապատանեկան ճամբարում:

Ընտանիքի օրվա կապակցությամբ ֆինանսական օժանդակություն է տրամադրվել 6 և ավելի երեխաներ ունեցող 12 ընտանիքի: Դժվար իրավիճակներում

հայտնված երեխաների 25 ընտանիքների ևս ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն:

«Վորլդ Վիժն ինտերնեյշնլ» միջազգային կազմակերպության աջակցությամբ իրականացվել է խնամքի և գիշերօթիկ հաստատություններից երեխաների բեռնաթափման և կանխարգելման ծրագիր, որի արդյունքում 2011թ 98 երեխայի փոխարեն այսօր խնամքի հաստատությունում կա 82 երեխա:

«Փրկենք երեխաներին» միջազգային կազմակերպության հետ իրականացվել են մարզի երեխաների հարցերով զբաղվող 70 մասնագետների հնգօրյա վերապատրաստումներ:

Ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համատեղ կազմվել է մուրացիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների տվյալների շտեմարան, իրականացվել է կարիքների գնահատում և կազմվել անհատական վերականգնողական ծրագրեր:

Մարզում մուրացիկ երեխա հաշվառված չէ, բայց կան հաշվառված 15 իրավախախտ երեխա, որոնց հետ ամենամսյա պրոֆիլակտիկ աշխատանքներ են կազմակերպվում:

Իրականացվել են աշխատանքներ գենդերային քաղաքականության 2011թ նախատեսված միջոցառումների ուղղությամբ: Ստեղծվել է գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խումբ, համայնքներում ներկայացվել է 2011-2015թթ. գենդերային քաղաքականության ազգային ծրագիրը և մշակվել է 2012թ միջոցառումների ծրագիրը:

Մարզի համայնքներում կազմակերպվել են բազմաբովանդակ միջոցառումներ՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան:

Միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ կազմակերպվել է ամառային ճամբար մարզի սոցիալապես անապահով 200 երեխայի համար:

Կազմակերպվել է 2 համաժողով, որին մասնակցել են երեխաների հարցերով զբաղվող կառույցների ներկայացուցիչներ, երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի անդամներ: Քննարկվել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտին վերաբերվող հարցեր:

Շարունակվել է համագործակցությունը մարզում գործող երեխաների և կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Որպես կարևորագույն խնդիր մնում է համայնքներում երեխաների հոգածության ցերեկային կենտրոնների ստեղծումը:

Կրթության բնագավառ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության բարելավման, ժամանակակից կրթական չափորոշիչների կիրառման արդյունքում մարզի դպրոցները հետ չեն մնում հանրապետության առաջատար և տեխնիկապես հագեցված հաստատություններից:

«Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի իրականացման ուղղությամբ՝ դպրոցները համակարգիչներով ապահովելու և համակարգչային

ուսումնական կենտրոններ ստեղծելու նպատակով Սյունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդհանուր առմամբ տեղադրվել է 1022 համակարգիչ՝ համապատասխան սարքավորումներով: Մեկ դպրոցում միջին հաշվով կա 9 համակարգիչ, իսկ յուրաքանչյուր 100 երեխային բաժին է ընկնում 6 համակարգիչ: Այս ցուցանիշները համեմատաբար բարձր են հանրապետության միջին ցուցանիշներից: 76 դպրոց ապահովված է ինտերնետային կապով, 104 դպրոցում գործում են համակարգչային դասարաններ:

Մարզի 35 դպրոցում գործում է լոկալ ջեռուցման համակարգ:

Հանրապետությունում մարզերից առաջինը Սյունիքում է ներդրվել հեռակառավարման (պիլոտային) ծրագրով ուսուցման մեթոդը, որը հնարավորություն է ընձեռել սյունեցի դպրոցականներին «կենդանի» ձևով, անմիջականորեն մասնակցել մայրաքաղաքում անցկացվող դասապրոցեսներին:

Համակարգվել և վերահսկվել է մարզի դպրոցական տարիքի և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառումը. դպրոցական տարիքի 17398 աշակերտներ ընդգրկվել են մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում, 9 աշակերտի համար կազմակերպվել է տնային ուսուցում: 2011 թվականի ընթացքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը մարզում կազմել է 172: 2011 թվականի ընթացքում մարզային ենթակայության 4 դպրոցներում (Սիսիանի թիվ 3, Գորիսի թիվ 3, Կապանի թիվ 1 և Մեղրիի թիվ 2) կազմակերպվել է ներառական կրթության փորձարարական ծրագրի ներդրումը: Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից գնահատվել և 2011 թվականի հունվարից պետական բյուջեյի հաշվին ֆինանսավորվել է 60 երեխայի նեոարական կրթությամբ ուսուցումը վերը նշված դպրոցներում:

Մարզում հաշվառվել է նախադպրոցական տարիքի 10341 երեխա: Պարտուսից դուրս մնացած երեխաներ մարզում չկան:

Շախմատը Հայաստանի դպրոցների տարրական դասարաններում դասավանդելու համար սահմանված ժամկետներում Հայաստանի շախմատի ֆեդերացիայի և շախմատի ակադեմիայի հետ համատեղ իրականացվել են անհրաժեշտ բոլոր նախապատրաստական աշխատանքներն այն որպես ուսումնական առարկա դպրոցում ներդնելու համար: Որակավորման դասընթացներին 3 փուլով մասնակցել և որակավորման համապատասխան վկայականներ են ստացել մարզի տարբեր առարկաներ դասավանդող 76 ուսուցիչներ և շախմատի մասնագետներ: Դպրոցները շախմատի ակադեմիայի կողմից ժամանակին ապահովվել են շախմատային դիդակտիկ նյութերով և ուսումնանյութական անհրաժեշտ բոլոր պարագաներով:

2011 թվականին դպրոցների ուսումնադաստիարակչական գործունեության ուսումնասիրությունների ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բարեփոխումների ներկա փուլի առաջնահերթ խնդիրների իրականացմանը, կրթության որակի ապահովմանն ու 12-ամյա կրթությանն անցնելու հետ կապված կարևորագույն հիմնահարցերի լուծմանը:

Մարզի բոլոր նախադպրոցական /ինչպես նաև հանրակրթական/ ուսումնական հաստատություններում կազմակերպվել և սահմանված ժամկետներում իրականացվել

են դպրոցներ և նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների՝ բնակչության պետական ռեգիստրում գրանցվելու գործընթացը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվել է 2011-2012 ուսումնական տարվա առաջին դասարանցիների՝ ուսումնական հաստատություններ ընդունելության համապատասխանությունը «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, արդյունքում խախտումներ և թերություններ չեն հայտնաբերվել:

Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման և լիցենզավորման կարգի համաձայն լիցենզավորվել է 107 դպրոց, գործընթացը գտնվում է ավարտական փուլում:

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից 2011 թվականի ապրիլին իրականացվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-րդ և 11-րդ դասարաններում սովորողների փաստաթղթերի ուսումնասիրություն. արդյունքում խախտումներ և թերություններ չեն հայտնաբերվել, աշակերտների տեղափոխություններն ու ընդունելությունները կատարվել են գործող կարգին համապատասխան: Ուսումնասիրություններ են կատարվել նաև Կապան քաղաքի թվով 10 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվել են անորոշ ժամկետով պայմանագրի հիման վրա պաշտոնավարող պետական ուսումնական հաստատությունների տնօրենների պաշտոնների համար 84 մրցույթ: 12 դպրոցում մրցույթների արդյունքների հիման վրա նշանակվել են նոր տնօրեններ:

2011 թվականի ընթացքում մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվել են ուսուցչի թափուր պաշտոնի համար 63 մրցույթ. միայն 3-ում մրցույթի արդյունքում հաղթող չի ճանաչվել:

Կազմակերպվել և համակարգվել է մարզի տարածքում նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության 2011թ. հանրապետական ռազմամարզական խաղերը: Քաջարանի N 1 միջնակարգ դպրոցի թիմը հանրապետական փուլում զբաղեցրել է 4-րդ տեղը, անհատական մրցումներում՝ 2-րդ և 3-րդ տեղերը. դպրոցն արժանացել է շնորհակալագրի: Կազմակերպվել է ՀՀ դպրոցականների 1-6-րդ դասարանի աշակերտների շրջանում անցկացվող «Աժ գավաթի խաղարկության», ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 20-րդ մարզական խաղերի մարզային, դպրոցականների շախմատի հանրապետական 6-րդ օլիմպիադայի ներդպրոցական և տարածաշրջանային փուլերը: Սյունիքի մարզի դպրոցականների աղջիկների վոլեյբոլի թիմը հանրապետական խաղերում գրավել է 1-ին տեղը:

Գ.Նժդեհի 125 ամյակին նվիրված «Դիպուկ հրաձիգ» հանրապետական մրցումներում մարզի թիմը գրավել է 4-րդ տեղը, իսկ անհատական մրցումներում՝ մեկ 1-ին տեղ և մեկ՝ 2-րդ:

ՀՀ կրթության և գիտության և ՀՀ պաշտպանության նախարարությունների համատեղ կազմակերպած՝ բանակի օրվան նվիրված «Հավատում եմ քեզ, զինվոր» թեմայով նամակի /ստեղծագործական շարադրության/ հանրապետական մրցույթում լավագույն 10 աշխատանքներն ուղարկվել են ՀՀ ԿԳ նախարարություն, որից 3-ը

արժանացել են մրցանակների, մեկ աշակերտ Խնձորեսկի միջնակարգ դպրոցից՝ վարչապետի կողմից հատուկ մրցանակի:

73 աշակերտ մասնակցել է դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին, 19 հոգի արժանացել են 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմների, 17-ը՝ գովասանագրերի:

Հայ առաքելական եկեղեցու հովանավորությամբ կազմակերպված առարկայական մրցույթի հանրապետական փուլում 3 մանկավարժներ արժանացել են 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների և դրամական խրախուսանքի: Ռուսաց լեզվի զարգացման կենտրոնի և ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ կազմակերպած մրցույթում մարզից 2 մանկավարժներ ճանաչվել են հաղթող և արժանացել ռուսաց լեզվի լավագույն ուսուցչի կոչման:

«Լավագույն տնօրեն», «Լավագույն ուսուցիչ» և «Լավագույն դաստիարակ» մրցույթների հանրապետական փուլում սյունեցի 3 մանկավարժները 1-ը արժանացել է ՀՀ վարչապետի խրախուսանքին, մյուսը ՀՀ ԿԳ նախարարի պատվոգրի:

«Աշխարհն առանց բռնության» թեմայով շարադրությունների և պաստառների մրցույթում մարզի հաղթող ճանաչված 5 աշակերտներ արժանացել են 1-ին, 2-րդ և հատուկ մրցանակների:

Դպրոցներին բաշխվել է 28 անուն 22539 կտոր անվճար և 38 անուն 27508 կտոր վճարովի դասագիրք, բնագիտական և առարկայական 8 անուն պաստառներ:

2011 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում «Փյունիկ» հիմնադրամի կողմից մարզի դպրոցներին տրամադրվել է 15 լրակազմ լաբորատոր սարքավորումներ և 50 համակարգիչ: Գործընթացը շարունակական է:

Մարզպետարանի և կրթության ազգային ինստիտուտի Կապանի և Գորիսի մասնաճյուղերի համագործակցության արդյունքում 2011 թվականի ընթացքում վերապատրաստվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների 1672 մանկավարժ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների 18 տնօրեն և 243 դաստիարակ:

Մարզի համայնքներին ցուցաբերվել է մեթոդական օգնություն նախադպրոցական ավագ տարիքի երեխաների տարրական կրթությունն արդյունավետ նախապատրաստելու ուղղությամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից «Կրթության մատչելիության ապահովում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախադպրոցական խմբեր են բացվել ՀՀ Սյունիքի մարզի 7 դպրոցներում և 9 նախակրթարաններում, որտեղ կատարվել են նաև վերանորոգման աշխատանքներ և տրամադրվել համապատասխան գույք:

Մարզում ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքագրման աշխատանքները կազմակերպվել են պատշաճ մակարդակով: Հաշվետվությունների վերաբերյալ ուսումնական հաստատություններին կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի /ԿՏԱԿ-ի/ և մարզպետարանի կողմից մշակվել և ուսումնական հաստատություններին է տրվել հաշվետվությունների լրացման կարգը: Շարժական ինտերնետային համակարգչային կայանի միջոցով մարզի Մուսալամ /Ձագեձոր/ և Լեիվազ գյուղերում դասընթացներ է կազմակերպել աշակերտների և ուսուցիչների համար:

Ոլորտում որպես հիմնախնդիրներ են մնում հանրակրթական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման և նյութատեխնիկական բազայի նորացման խնդիրները:

Ժողովրդագրական բացասական միտումների հետ կապված բավականին լուրջ հիմնախնդիր է դարձել մարզի սահմանամերձ, լեռնային սակավաթիվ բնակչությամբ համայնքներում գյուղական դպրոցի պահպանության խնդիրը: Առկա միտումների պահպանման դեպքում առանձին համայնքներ արդեն իսկ կանգնել են դպրոցների փակման վտանգի առջև, ինչն իր հերթին զգալի բացասական հետևանքներ է ունենում գյուղապահպանության խնդրի վրա:

Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառ

Ոլորտում մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղված է եղել մարզի մշակութային դերի բարձրացմանը, պետական, ազգային ու այլ տոների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, ազգային ծեսերի ու ծիսակատարությունների վերականգնմանն ու տարածմանը, մշակութային ժառանգության պահպանմանը, թանգարանների ու գրադարանների գործունեության ապահովմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանը, մարզական և հոգևոր կյանքի բարելավմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների ակտիվացմանը:

Մարզում գործում են 2 դրամատիկական թատրոն, 6 թանգարան, 130 գրադարան, 15 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 7 մշակութային կենտրոն, 110 մշակույթի տուն և ակումբ, 7 մարզադպրոց, 6 մարզադաշտ և այլ մարզական կառույցներ ու մշակութային օջախներ:

2011թ. մարզի համայնքներում պատշաճ մակարդակով նշվել են ազգային, պետական տոները, հոբելյանները: Կազմակերպվել և անց են կացվել բազմաթիվ մշակութային և սպորտային միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, երիտասարդական հավաքներ:

Մարզի բոլոր համայնքներում կազմակերպվել են զանգվածային միջոցառումներ՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 66-րդ և Շուշիի ազատագրման 19-րդ տարեդարձներին: Մարզի քաղաքային համայնքներում կազմակերպվել են հանդիսավոր երեկոներ, անցկացվել զինվորական շքերթներ:

Հայոց բանակի ստեղծման 19-րդ տարեդարձի կապակցությամբ մարզի քաղաքային և գյուղական համայնքներում, մարզում տեղակայված N զորամասերում իրականացվել են համերգային ծրագրեր ու մշակութային միջոցառումներ: Զանգվածային միջոցառումներ են կազմակերպվել նվիրված կանանց միջազգային օրվան, մայրության ու գեղեցկության տոնին, Մեծ եղեռնի զոհերի հիշատակի 96-րդ, Սահմանադրության 16-րդ և ՀՀ անկախության 20-րդ տարեդարձներին:

ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպվել և անց են կացվել «Երազ իմ երկիր», «Սյունիք», «Սյունիքի մշակութային օրեր ԼՂՀ-ում» մարզամշակութային փառատոները, «Կինոաշուն, ազգային կինոյի ամիս» միջաջառումը, «Հայկական ներկայանակ»

նկարչական հանրապետական փառատոնի անցկացումը, բացվել է ցուցահանդես ՀՀ նկարիչների միությունում, ԼՂՀ-ում և մարզում, բազմաթիվ այլ ցուցահանդեսներ, հանդիպումներ, քննարկումներ, մեծարման և հանդիսավոր երեկոներ:

ԱՊՀ կազմավորման և ՀՀ անկախության 20-ամյակների կապակցությամբ «Մենք ապագայի հետ միաձուլվում ենք ռուսերեն լեզվով» խորագիրը կրող ռուսերեն խոսքի օրեր Հայաստանում միջոցառումների շրջանակներում Ռուսաստանի Դաշնության Մոսկվայի երիտասարդական թատրոնը հյուրախաղերով հանդես է եկել Կապան և Գորիս քաղաքներում:

ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ, Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև բարեկամության 20-ամյակին նվիրված, կազմակերպվել և անց են կացվել «Հայ-Իրանական բարեկամության օրեր Մեղրիում» միջոցառումների ծրագիրը, «Եվրոպական ժառանգության օրեր Գորիսում» հանրապետական միջոցառումը:

Բազմաթիվ միջոցառումներ են իրականացվել նվիրված Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ստեղծման 15-ամյակին: Այս միջոցառումների շրջանակներում մարզը ակտիվ մասնակցություն է ունեցել Գյումրի քաղաքում կայացած «Expo-ցուցահանդես և մշակութային միջմարզային մրցույթ փառատոն»-ին, գրավելով մեկ առաջին և մեկ երկրորդ տեղեր:

Հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպվել են «Հանդիպման վայրը գրադարան» խորագիրը կրող լայնածավալ միջոցառումներ:

Գ. Նժդեհի 125 և Լեոնահայաստանի 90-ամյակներին նվիրված միջոցառումների շրջանակներում Տաթև գյուղում և Կապան քաղաքում կազմակերպվել և անց է կացվել հանրապետական գիտաժողով, կատարվել ուխտագնացություն, մարզի զորամասերում կազմակերպվել զորահանդեսներ:

Բարձր մակարդակով են կազմակերպվել հայ մեծանուն գրող Հովհաննես Շիրազի ծննդյան 95-ամյակին նվիրված 3-րդ և արևմտահայ գրողների ստեղծագործություններին նվիրված 4-րդ ասմունքի հանրապետական փառատոնները: Ասմունքի 3-րդ փառատոնի հանրապետական փուլում մարզը առաջին տարիքային խմբում գրավել է առաջին պատվավոր տեղը, 4-րդ փառատոնում՝ արժանացել խրախուսական մրցանակի:

Լուրջ ուշադրություն է դարձվել երիտասարդության հետ տարվող աշխատանքներին, նրանց շրջանում կազմակերպվող միջոցառումներին: Երիտասարդության հետ տարվող աշխատանքները ակտիվացնելու նպատակով մարզում կազմակերպվել են «Ուսանողական ամառ» փառատոնը, «Ձանգեգուրյան ձմեռ», «Քաջարանյան ձմեռ», «Բազե-2011» համահայկական երիտասարդական հավաքը Բյուրականում և ճամբարը Ծաղկաձորում, «Վերջին զանգ», «Կապան քաղաքի օր», «Սիսիան քաղաքի օր», «Ագարակ քաղաքի օր» տոնախմբությունները և այլ միջոցառումներ /մարզամշակութային փառատոններ, ցուցահանդեսներ, ուխտագնացություններ ու մրցումներ/:

Բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի մասսայականացման նպատակով 2011թ. մարզում անց են կացվել ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական քաղաքային համայնք», «Լավագույն մարզական բակ» ստուգատեսները,

(«Լավագույն մարզական քաղաքային համայնք» ստուգատեսի հանրապետական փուլում լավագույն քաղաք է ճանաչվել Կապան քաղաքը, «Լավագույն մարզական բակ» ստուգատեսի հանրապետական փուլում Քաջարան քաղաքը զբաղեցրել է 2-րդ պատվավոր տեղը), ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին նվիրված մարզական փառատոնը, ՀՀ շախմատի առաջին խմբի 72-րդ մրցաշարը, ՀՀ դպրոցականների շախմատի 6-րդ օլիմպիադայի 2-րդ փուլը, վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահի գավաթի համար մրցաշարի հանրապետական եզրափակիչ փուլը, «ՀՀ ազգային ժողովի գավաթի համար» սպորտային մրցումները, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված մինի ֆուտբոլի մարզային առաջնությունը, Անդրանիկ Մարգարյանի ծննդյան 60-ամյակին նվիրված ֆուտբոլի մարզային մրցաշարը, Մերուժան Սարգսյանի հիշատակին նվիրված թեթև ատլետիկայի հանրապետական մրցումները, կրոսավազքեր և այլ սպորտային միջոցառումներ: Մարզի 6 քաղաքային համայնքների շուրջ 80 երիտասարդ մարզիկներ իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել 5-րդ համահայկական խաղերին՝ արժանանալով երեք բրոնզե և մեկ արծաթե մեդալի: Մարզում կազմակերպվել և անց են կացվել միջազգային օլիմպիական օրվան նվիրված սպորտային մրցումներ, առաջնություններ ու հուշամրցաշարեր:

Մարզամշակութային միջոցառումները կազմակերպվել են «Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը» ծրագրով մարզպետարանին հատկացված 16.8մլն. դրամ միջոցներով:

Պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցների, միջազգային կազմակերպությունների, բարերարների աջակցությամբ վերանորոգվել են մարզի մի շարք համայնքների մշակույթի տներ, ակումբ-գրադարաններ, սպորտային դահլիճներ, ստեզծվել են խաղահրապարակներ: Հիմնանորոգվել են Մեղրիի մշակույթի տան տանիքը, Կապանի երկրագիտական թանգարանի շենքը, Գորիսի Ա.Սաթյանի անվան երաժշտական դպրոցը, Ա.Բակունցի տուն թանգարանը, Գորիսի Վ.Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնը, Անգեղակոթ ու Խնձորեսկ գյուղերի մշակույթի տները: Ընդհանուր առմամբ իրականացվել են շուրջ 402 մլն.դրամի շինվերանորոգման աշխատանքներ: Կատարվել են Վ.Հանդ և Եղվարդ գյուղերի վերակառուցված եկեղեցիների օժման արարողությունները:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել մարզի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ:

Բնագավառում դեռևս չլուծված են մնում գյուղական և քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կառույցների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցերը:

Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման բնագավառ

2011 թվականին Սյունիքի մարզի սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառությունը՝ նախնական տվյալներով (ընթացիկ գներով) կազմել է մոտ 12.0 մլրդ դրամ, ընդ որում առևտրաշրջանառության գերակշռող մասը՝ ավելի քան 6.6 մլրդ դրամ կամ 55.0%-ը ձևավորվել է խանութների և կրպակների միջոցով:

«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում ստուգման արդյունքների վերաբերյալ ՀՀ Սյունիքի մարզպետարանին ներկայացրած 2011 թվականի հաշվետվությունների ամփոփ տվյալներով, մանրածախ առևտրով զբաղվող օբյեկտների թիվը մարզում կազմել են 1061 միավոր (Կապանի տարածաշրջանում՝ 476, Գորիսի տարածաշրջանում՝ 230, Սիսիանի տարածաշրջանում՝ 181, Մեղրիի տարածաշրջանում՝ 174), հանրային սննդի օբյեկտների թիվը՝ 116, կենցաղային ծառայությունների օբյեկտների թիվը՝ 121:

Բնակչության մեկ շնչի հաշվով մանրածախ առևտրի շրջանառությունը կազմում է մոտ 78483 դրամ (հանրապետության միջին ցուցանիշից 4.6 անգամ պակաս):

Մարզում մատուցված վճարովի ծառայությունների ծավալը՝ նախնական տվյալներով 2011 թվականին՝ ընթացիկ գներով, կազմել է շուրջ 9.0 մլրդ դրամ:

Բնակչության մեկ շնչի հաշվով վճարովի ծառայությունների ծավալը կազմում է մոտ 58862 դրամ (հանրապետության միջին ցուցանիշից 4.5 անգամ պակաս):

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը 2011թ. նոյեմբեր ամսին մարզի կազմակերպություններում կազմել է 145.6 հազ դրամ, որը բարձր է հանրապետության համապատասխան ցուցանիշից մոտ 26.8%-ով, ինչը պայմանավորված է հանքագործական արդյունաբերության ոլորտում բարձր աշխատավարձերի մակարդակով:

Մարզի բնակչության ճնշող մեծամասնությունն ունի ցածր եկամուտներ: 2011 թվականի 10 ամսվա տվյալներով մարզում տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 56.2 հազար մարդ: Գրանցված գործազուրկների թիվը կազմել է 4687 մարդ, որը կազմում է հանրապետության համապատասխան ցուցանիշի 6.7%-ը, գործազրկությունը մարզում կազմում է 8.3%, որը հանրապետության միջին ցուցանիշից բարձր է 1.3 անգամ: 01.12.2011թ. դրությամբ մարզի զբաղվածության կենտրոններում գրանցված գործազուրկների թիվը կազմել է 4619 մարդ:

Արտաքին կապեր

2011 թվականի ընթացքում շարունակվել է արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

2011թ. մայիսի 30-ին Թեհրանում կայացած հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստի Փոխընթացման հուշագրի և 2005թ. հունիսի 29-ին ՀՀ Սյունիքի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Արևլյան Ատրպատականի նահանգի միջև կնքված համագործակցության փոխընթացման հուշագրի շրջանակներում.

- ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել առաջարկություն ՀՀ Սյունիքի մարզում /Կապան քաղաքի շրջակայքում/ ստեղծելու մինչև 100 հա և ավելի զարգացման հնարավորությամբ արդյունաբերական գոտի՝ մարզի Սյունիք գյուղական համայնքի վարչական տարածքում: Հարցը գտնվում է քննարկման փուլում:

- 2011թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 1-ը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքում ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ կազմակերպվեցին հայ-իրանական բարեկամության օրեր Մեղրիում:

- Մարզի տնտեսության զարգացման նպատակով մարզի հանքարդյունաբերական և մի շարք այլ ձեռնարկությունների ու գործարարների կողմից Իրանի Իսլամական Հանրապետությունից 2011թ. ընթացքում մարզ է ներկրվել նիտրատներ, դիզ. վառելիք, քսայուղեր, պահեստամասեր, բիտում, էլ. սարքավորումներ, շինանյութ և այլ ապրանքներ: Մարզից ԻԻՀ են արտահանվել պահածոներ:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային համագործակցության և «Արդյունաբերական ինովացիայի» թեմայով առաջին ցուցահանդես ֆորումի շրջանակներում ձեռք է բերվել համաձայնություն և նախապատրաստվել համաձայնագիր ՀՀ Սյունիքի մարզի և ՌԴ Չելյաբինսկի մարզի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության վերաբերյալ: Կազմակերպված «Արդյունաբերական ինովացիայի» թեմայով ցուցանադեսին ՀՀ Սյունիքի մարզից մասնակցել են 4 կազմակերպություններ:

2011թ. հունիսի 28-30-ը Սյունիքի մարզ այցելած ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպանի գլխավորած պատվիրակության հետ մարզպետի հանդիպման ժամանակ քննարկվել են փոխադարձ համագործակցության ծրագրեր և հեռանկարներ:

2011թ. նոյեմբերին Սյունիքի մարզ այցելած Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի, ԱՄՆ-ի ռազմական կցորդի տեղակալի և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ Դավիթբեկ գյուղի մոտ տեղի ունեցավ հայ սակրավորների կողմից ականազերծված տարածքների հանձնումը մարզային իշխանություններին, որն իրականացվել էր «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

2011թ. մայիսի 31-ին Սյունիքի մարզ կատարած այցելության ընթացքում Համաշխարհային բանկի տարածաշրջանային տնօրեն Ասադ Ալամն այցելեց Գորիսի

բժշկական կենտրոն և Տաթև: Քննարկվեցին մարզի զարգացմանը նպաստող ծրագրերի իրականացման հեռանկարները:

2011թ. մայիս ամսին ԼՂՀ պատվիրակությունը մասնակցեց Տաթևում կազմակերպված Լեռնահայաստանի օրվան նվիրված միջոցառմանը:

2011թ. մայիսի 9-ին ՀՀ Սյունիքի մարզպետը մասնակցեց ԼՂՀ-ում կազմակերպված Շուշիի ազատագրման օրվան նվիրված միջոցառմանը:

ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ Սյունիքի մարզպետարանի և գերմանական զարգացման բանկի միջև կնքված համաձայնագրի շրջանակներում 2011թ. սկսվել է «Շիկահողի կենսոլորտային արգելոցի հիմնադրման և շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի» կարիքների գնահատման նախապատրաստական աշխատանքները: Ծրագրի ընդհանուր ներդրման չափը կկազմի 8.25 մլն եվրո: Ծրագրի իրականացման մեկնարկը կտրվի 2012թ.-ին:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՇՁՀԳ-ի հետ հաստատվել և «Շեն» ԲՀԿ-ի միջոցով ՇՁՀԳ-ի ֆինանսավորմամբ 2011թ. իրականացվել է Մեղրիի տարածաշրջանի գյուղական զարգացման ծրագիրը շուրջ 88.5 մլն դրամ ընդհանուր գումարով:

2010թ. հոկտեմբեր ամսին ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության /ՇՁՀԳ/ հետ ստորագրված համաձայնագրի համաձայն 2011թ. մենկարկեց «Սոցիալական տուն աջակից պայմաններով» ծրագրի Գորիս քաղաքում 22 բնակարանանոց նոր շենքի կառուցման աշխատանքները:

Տարվա ընթացքում մարզ են այցելել միջազգային կազմակերպությունների, դեսպանությունների ներկայացուցիչներ, ձեռք բերվել մարզի համար հետաքրքրություն ներկայացնող պայմանավորվածություններ:

Տեղեկատվության բնագավառ

Մարզպետարանի գործունեության մեջ որոշակի տեղ է զբաղեցրել նաև հրապարակայնության ապահովումը՝ որպես տարածքային կառավարման սկզբունք:

Մարզպետարանը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջների շրջանակներում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ու թափանցիկության ապահովման, ինչպես նաև համայնքներում հանրային իրազեկման գործընթացի արդյունավետ կազմակերպման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործարկվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանի համացանցային պաշտոնական նոր կայքը <http://syunik.gov.am>, որի միջոցով լուսաբանվել են ՀՀ պաշտոնատար անձանց, արտերկրի պատվիրակությունների այցելությունները, մարզային արժանահիշատակ դեպքերն ու իրադարձությունները, ինչպես նաև հանրությանը իրազեկվել է մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեության, ընդունված իրավական ակտերի, սոցիալ-տնտեսական զարգացման և աշխատանքային ծրագրերի, մարզխորհրդի նիստերի օրակարգերի և անցկացման ժամկետների, քաղաքացիների ընդունելության օրերի, ժամերի և վայրերի, համայնքների ավագանիների ընդունած որոշումների, մարզի 2010-

2013 թթ մարզի զարգացման ծրագրի դրույթներով նախատեսված և մարզի հետ առնչվող այլ տեղեկատվական նյութերի մասին:

“Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ” ծրագրի շրջանակներում այս տարի համացանցային պաշտոնական կայքեր ստեղծվեցին Կապան (<http://kapan.am>), Քաջարան (<http://kadjaran.com>), Գորիս (<http://goriscity.am>), Սիսիան (<http://sisian.am>), և Ագարակ (<http://agarak.am>) քաղաքային համայնքներում: Ընթացքի մեջ են նաև Մեղրի քաղաքային համայնքի կայքի գործարկման աշխատանքները:

Կարևորելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը՝ իրականացվել են մարզպետարանի տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, նոր տեխնիկական միջոցների վերազինման աշխատանքները:

Ապահովվել է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակումը:

Մարզում տեղեկատվության ազատության և հրապարակայնության ապահովման գործընթացին նպաստել են մարզային ու համայնքային 15 լրատվամիջոցների հետ համագործակցությունը, որոնց միջոցով լուսաբանվել է մարզի հասարակական-քաղաքական կյանքը:

Առավել կարևորություն ներկայացնող և հասարակական հնչեղություն ունեցող իրադարձությունները լուսաբանվել և հանրությանն են ներկայացվել տեղական ու հանրապետական ԶԼՄ-ներով, մարզպետարանի պաշտոնական կայքով:

Եզրափակիչ դրույթներ, առաջարկություններ

Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարումը և տարածքային կառավարման մարմինների գործունեությունը առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ ենք համարում.

1. Տարածքային կառավարման հարաբերությունները և տարածքային կառավարման մարմինների լիազորությունները առավել հստակեցնելու, մարզպետարանների կարողությունների ուժեղացման, հանրային կառավարման համակարգում հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորման, տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով «Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի կամ «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի նոր հրամանագրի ընդունումը.
2. Հանրապետական գործադիր մարմինների առանձին լիազորությունների ապակենտրոնացման և այն տարածքային կառավարման մարմիններին վերապահման խնդրի օրենսդրական կարգավորում.
3. Կցվում են մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված առաջարկությունները:

Սյունիքի մարզպետի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

- Արտադրության և տեղական հումքի վերամշակման ձեռնարկությունների վերագործարկման նպատակով մարզի տարածքում միջազգային և դոնոր կազմակերպությունների ներգրավմամբ երկարաժամկետ ներդրումների և վարկավորման ծրագրերի իրականացման ապահովում:

3. ՀՀ քաղաքաշինության նախարարություն

- 4-րդ և 5-րդ աստիճանի վնասվածություն ունեցող 98 անհատական բնակելի տների բնակիչների բնակարանային խնդրի լուծում:
- 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող 29 բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացում, բնակիչների բնակարանային խնդիրների լուծում:
- Ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով չչահագործվող, վերականգնման ենթակա 87 անհատական բնակելի տների վերականգնում:
- Վթարային վիճակում գտնվող դպրոցական շենքերի ուժեղացում և հիմնանորոգում:

4. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

- Մ-2 Երևան-Մեղրի մայրուղու ՊԿ 168-ՊԿ172, ՊԿ214-ՊԿ217 (Սիսիանի տարածք) և ՊԿ227-ՊԿ230+25 (Գորիսի տարածք) հատվածներում ձյունապաշտպան արգելապատնեշների տեղադրում՝ երթևեկության անվտանգության և անցանելիության ապահովման նպատակով:
- Սիսիան-Կապան այլընտրանքային ճանապարհի կառուցում:

5. ՀՀ բնապահպանության նախարարություն

- Մ-2 Երևան-Մեղրի մայրուղու ՊԿ 262+000-263+800, ՊԿ 262+000-270+000 (Գորիսի տարածք) հատվածներում ձմռան ժամանակաշրջանում ճանապարհի անցանելիության և անվտանգության ապահովման նպատակով, վերոնշյալ ճանապարհահատվածից հյուսիս ընկնող անտառի 0.9 զանգվածի ծառահատում:

6. ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

- Մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին առաջին վերարտադրության սերմանյութերով, ազոտական պարարտանյութով և մատչելի գներով դիզելային վառելանյութով ապահովում:
- Գյուղացիական տնտեսություններին փոքրածավալ և հզոր գյուղատնտեսական տեխնիկայով վերազինման աջակցության ապահովում:

7. ՀՀ կրթության և գիտության նախարարություն

- Անհրաժեշտ գույքի, ժամանակակից տեխնիկական միջոցների ձեռքբերում, ինտերնետային կապի ընդլայնում և ուսումնանյութական բազայի համալրման ապահովում.
- Վերիշենի միջնակարգ դպրոցի շենքային բազայի հիման վրա ռազմամարզական վարժարանի հիմնադրմանը.

8. ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններ

- Մարզի մշակութային օջախների վերանորոգում, գույքային բազայի նորացում.

9. ՀՀ առողջապահության նախարարություն

- Առողջապահական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, ժամանակակից տեխնիկական միջոցներով և սարքավորումներով հագեցվածության, կադրերի մասնագիտացման և շարունակական կրթման ապահովում
- Շտապ օգնության ծառայությունների արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

11. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն

- Բարեփոխել ընտանիքների անապահովության գնահատման համակարգը և նպաստի գումարները ուղղել սոցիալական խմբերում ընդգրկված կարիքավոր անձանց:
- Արժվանիկի տարեցների սպասարկման կենտրոնը վերցնել պետական հովանավորության ներքո և ֆինանսավորել պետական բյուջեից:
- Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ստեղծում Գորիս քաղաքում:
- Բազմազավակ ընտանիքներին ուղղված պետական նպատակային ծրագրերի մշակում:

Հավելված N 1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետարանի գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների մասին

Համայնքների եկամուտները	Համայնքների եկամուտները այդ թվում	նախատեսված ընդամենը եկամուտներ	2009թ.	2819643.7
			2010թ.	3130739.5
			2011թ.	3051702.1
	Համայնքների ընդամենը եկամուտների կատարման տոկոսը	մարզի միջինը (%)	2009թ.	88.70%
			2010թ.	95.90%
			2011թ.	97.80%
	Սեփական եկամուտների աճը նախորդ տարվա համեմատ	հազ.դրամ	2009թ.	118816.3
			2010թ.	41825.9
			2011թ.	75887.5
Զրոգտագործում	Ոռոգման ջրի վարձավճարներ	2009թ.	92.0%	
		2010թ.	89.3%	
		2011թ.	94.5%	
	Խմելու ջրի վարձավճարներ	2009թ.	98.7%	
		2010թ.	98.8%	
		2011թ.	98.8%	
Հորոգտագործում	Համայնքների վարչական սահմաններում	ընդամենը /հա/	2010թ.	31250
			2011թ.	45130
			2010թ.	80.4%
			2011թ.	91.4%
Ընդերքի օգտագործում	Շահագործող կազմակերպությունների թիվը	2010թ.	25	
		2011թ.	27	
	ունեն հողիատկացում	2010թ.	25	
		2011թ.	28	
	ունեն լիցենզիա	2010թ.	25	
		2011թ.	42	
Համաարիություններ	Ընդամենը ձևավորված	2010թ.	23	
		2011թ.	23	
	Գործող	2010թ.	23	
		2011թ.	23	
Ատորջապահություն	Պետ.պատ.շրջանակ. տրվել է /մլրդ. դրամ/	2010թ.	1.373.2	
		2011թ.	1.672.1	
	Մատուցվել է վճարովի բուժ.ծառայություն /մլն. դրամ/ /այդ թվում՝ համավճար/	2010թ.	90.6	
		2011թ.	101.2 /21.2/	
	Կուտակված պարտքը /մլն. դրամ/	2010թ.	0	
		2011թ.	0	
	Բուժ. հիմնարկներում փոփոխված ղեկավարների թիվը	2010թ.	1	
		2011թ.	0	

Կրթություն	Մանկավարժական կադրերի պահանջարկը /սահմանամերձ գյուղական բնակավայրերում/		2010թ.	7
			2011թ.	9
	Դպրոցների փոփոխված տնօրենների թիվը		2010թ.	2
			2011թ.	12
Սոցիալական ոլորտ	Վարձատրվող հասարակական աշխատանքներ	հատկացվել է /մլն.դրամ/	2010թ.	72.5
			2011թ.	61.1
		իրականացվել է /մլն.դրամ/	2010թ.	71.97
			2011թ.	9.73
		Ծրագրերի թիվը	2010թ.	101
			2011թ.	15
	Գործազուրկների թիվը	Մասնակցել է /մարդ/	2010թ.	961
			2011թ.	110
		Ընդամենը	2010թ.	5272
			2011թ.	4690
		Գյուղական բնակավայրերում	2010թ.	532
			2011թ.	350

*Ծանոթություն- Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասերը 01.08.2010թ. ընդգրկվել են համայնքների վարչական սահմաններում

Տեղեկանք

**2011 թվականի ընթացքում միջազգային և այլ կազմակերպությունների կողմից
ՀՀ Սյունիքի մարզում կատարված ներդրումների մասին**

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Ընդհանուր գումարը /հազ. դրամ/	Այդ թվում /հազ. դրամ/		
			Զարգաց. ծրագրեր	Հումանիտար օգնութ.	Վարկային ծրագրեր
1	«Լեռ-Էքս» ՍՊԸ	1460000.0	1460000.0		
2	ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակ	76015.0	76015.0		
3	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ	341345.5	341345.5		
4	«Ասիական զարգացման բանկ»	730000.0	730000.0		
5	Հազարամյակի մարտահրավեր-հիմնադրամ	1003302.8	1003302.8		
6	«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ	263000.0	263000.0		
7	«SEF» ունիվերսալ վարկային կազմակերպություն	1022270.0			1022270.0
8	«Սարդարապատ» ԲՀԿ	1955.0		1955.0	
9	«Վորլդ Վիժն» կազմակերպության	182454.0	182454.0		
10	«Քաջարան» հիմնադրամ	121103.0	121103.0		
11	«Գորիս» բարեգերծական հիմնադրամ	14500.0	14500.0		
12	«Մեղրի-Ազարակ» հիմնադրամ	14995.8	14995.8		
13	«Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ	53584.0	12471.0	41113.0	
14	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ	35330.0		35330.0	
15	ՅՈՒՆԻՍԵՖ/ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ/ ներկայացուցչություն Հայաստանում	11020.0	11020.0		
16	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր /UNDP/	106430.4	106430.4		
17	«Կապանի տարածաշրջանի ֆերմերների ասոցիացիա» ՀԿ	5109.5	5109.5		
18	Զինիշյան հիշատակի հիմնադրամ	3105.7		3105.7	
19	«Նոր հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ	272500.0			272500.0
20	«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ	632000.0			632000.0
21	«Ակրա-կրեդիտ ազրիկոլ բանկ» ՓԲԸ	4500000.0			4500000.0
22	Հայաստանում շվեյցարական համագործակցության գրասենյակ	152000.0	152000.0		
23	ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (FAO)	420220.0	420220.0		
24	«Հովարդ Կարազյոզյան» ԲՀԿ	31715.0		31715.0	
25	Գյուղնախարարության ԾԻԳ	28860.2	28860.2		
26	«Հայաստան» համահայկական հիմնադրամ	90385.1	90385.1		
27	«Առողջապահական ԾԻԳ» ՊՀ	65374.0	65374.0		
28	Բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ	32300.0	32300.0		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

29	ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ	39344.9	39344.9		
30	ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղ	33700.0	33700.0		
31	«Իստեյտ մենեջմենթ ենդ ադմինիստրեյշն քամփնի» ՓԲԸ /Տաթևի վանական համալիրի վերականգնում/	525300.0	525300.0		
32	UMCOR, «Արեգակ» վարկային ծրագիր	900000.0			900000.0
33	«ՄԶԳ» միջազգային զարգացման գործակալություն	82000.0	82000.0		
34	«Հեյֆեր Փրոջեքտ Ինթերնեյշնլ»	1790.0	1790.0		
35	«Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ	5060.0	0.0	5060.0	
36	«Շեն» բարեգործական հասարակական կազմակերպություն	88500.0	88500.0		
37	«Գլենդել-Կապան» քույր քաղաքների միություն	6864.0	6864.0		
38	«Դինո Գոլդ Մայնինգ Քամպնի» ՓԲԸ	103483.2	24849.8	78633.4	
39	Ղ-Տելեկոմ /VIVACELL	26580.9	0.0	26580.9	
40	Արմեն Հարությունյան, Նորաշենիկի կենցաղի տան հիմնանորոգում	15000.0	15000.0		
41	Ագարակի գյուղական համայնք	17716.0	17716.0		
42	Ռուսաց լեզվի աջակցման «Հայ-ռուսական» ԲՀԿ	22300.0	22300.0		
43	ՀՀ Արդարադատ. նախարարության դատաիրավական բարեփոխումների ծրագիր	85000.0	85000.0		
	Ընդամենը	13623514.0	6073251.0	223493.0	7326770.0

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ /2011թ./

1. Ստացվել են նամակներ ընդամենը -	1696
որից՝	
աջակցություն	1665
առաջարկություն	7
հարցում	5
բողոք	19
այդ թվում՝	
կրկնակի	6
կուլեկտիվ	5
2. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	22
կոմունալ-կենցաղային	22
շինարարական	3
արդձեռն/տրանսկապ/	3
գյուղատնտեսական	10
բնութ. պահպանութ.	3
առևտրի	3
կենսաթոշակի և նպաստի	20
առողջապահության	343
կրթական և մանկ. հիմն	128
գիտութ. կուլտուրա	7
ֆինանսական	961
օրենսդրական	5
քաղ. և որդեգրման	13
աշխ. տեղ և հաշվառման	68
հողհատկացում և հողօգտ.	12
ապարատային	33
այլ հարցեր	40

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2011թ. ՀՀ Սյունիքի մարզպետարան մուտք գործած և մարզպետարանից առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2011 թվականին կիսամյակում մարզպետարան մուտք է գործել 8864 փաստաթուղթ, այդ թվում՝

ՀՀ նախագահի աշխատակազմից	15
ՀՀ Ազգային Ժողովից	7
ՀՀ Նախագահի տիկնոջ գրասենյակից	1
ՀՀ կառավարությունից և վարչապետից	1117
ՀՀ նախարարություններից	770
ՀԳՄՏԾ-ներից, մարզային ենթակայության և այլ կազմակերպություններից	1130
Տեղական ինքնակառավարման մարմիններից	3852
Գաղտնի թղթակցություն	26
ՀՀ քաղաքացիներից.	1626
այդ թվում՝ ուղեկցական նամակներով	90
ՀՀ նախագահի աշխատակազմից	41
ՀՀ Ազգային Ժողովից	1
ՀՀ կառավարությունից և վարչապետից	33
ՀՀ նախարարություններից	14
ՀՀ Նախագահի տիկնոջ գրասենյակից	1
Մարդու իրավունքների պաշտպան.	0
<i>Ելից</i>	<i>6120</i>

2011 թ. ներկայացվել է՝

ՀՀ կառավարությանը և ՀՀ վարչապետին 1140 գրություն այդ թվում՝ 146 առաջարկություն, կատարվել է 117-ը, ընթացքի մեջ է 29-ը: որից՝

ՀՀ կառավարության որոշման նախագծի տեսքով 28-ը,

ՀՀ նախարարություններին 770 գրություն

այդ թվում՝ 42 առաջարկություն

27-ը կատարվել է 15-ը՝ ընթացքի մեջ:

2011թ. ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից ընդունվել է 262 որոշում և 150 կարգադրություն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2011թ. ՀՀ Սյունիքի մարզում քաղաքաշինության բնագավառում իրականացված ծրագրերի մասին
առ 01.01.2012թ.

N/N	Ծրագրի անվանումը	Պայմանագրային գինը (հազ. դրամ)	Կատարողական (հազ. դրամ)
1	2	3	4
	Պատվիրատու՝ ՀՀ Սյունիքի մարզպետարան		
1	ք. Կապանի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում	48970.9	46680.02
2	ք. Կապանի թանգարանի շենքի վերանորոգում	79543.7	79543.65
3	ք. Մեղրու մշակույթի տան տանիքի վերանորոգում	39112.927	39107.859
4	ք. Կապանի Ռ. Մինասյան փողոցի ասֆալտապատում	101689.043	101689.036
5	ք. Գորիսի Խորենացու փողոցի ասֆալտապատում և բարեկարգում	57891.877	57891.877
6	ք. Գորիսի «Ավանգարդ» թաղամասի բարեկարգում	123238.345	123238.345
7	ք. Ագարակի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	38556.306	38556.306
8	ք. Սիսիանի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	67738.5	67738.5
9	ք. Սիսիանի ջրային հայելիների սանիտարական մաքրում և բարեկարգում	53785.131	53785.014
10	գ. Խնձորեսկի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում	34130.14	34129.7
11	ք. Գորիսի Սաթյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգում	24378.71	24378.71
12	գ. Աճանանի դպրոցի տանիքի հիմնանորոգում	18934.27	18934.03
13	Նախագծահետազոտական աշխատանքներ	15020.0	15020.0
	Ընդամենը	702989.849	700693.047
1	ք. Կապանի թանգարանի շենքի վերանորոգում	12095.382	12095.382
2	ք. Կապանի թ 4 մանկապարտեզի վերանորոգում	11628.25	11628.25
3	գ. Աճանանի դպրոցի կոյուղագծի վերանորոգում	1903.358	1903.358
4	ք. Մեղրու թ 1 բնակելի թաղամասի փողոցի վերանորոգում	18430.591	18430.591
5	ք. Կապանի Գ. Արզումանյան փողոցի վերանորոգում	118713.1	118713.116
6	ք. Գորիսի Խորենացու փողոցի ասֆալտապատում և	15340.563	15340.563

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

	բարեկարգում		
7	Մ2- Մեղրի մտնող կամրջի ուժեղացում-ընդլայնում	18610.521	18610.521
8	ք. Ագարակի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	38669.582	38669.582
9	ք. Սիսիանի Կամոյի փողոցի վերանորոգում	29198.3	29198.349
10	ք. Սիսիանի թ3 մանկապարտեզի վերանորոգում	2914.022	2914.022
11	գ.Սառնակունքի հանդիսությունների տան վերանորոգում	605.93	605.93
12	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկական մասնաշենքի վերանորոգում	3284.8	3284.847
13	ք. Գորիսի Սաթյանի անվան երաժշտական դպրոցի վերանորոգում	2028.518	2028.518
14	ք.Գորիսի թ 2 դպրոցի վերանորոգում	13086.2	13086.224
15	ք.Գորիսի թ 5 դպրոցի վերանորոգում	20319.3	20319.3
16	ք.Գորիսի մանկավարժական քոլեջի սանհանգույցների նորոգում	3062.889	3062.889
17	ք.Սիսիանի Ֆիզկուլտուրնիկների փողոցի թիվ 2 բազմաբնակարան շենքի վթարային 4-րդ մուտքի ուժեղացում և ամրացում	3790.777	3790.777
18	Նախագծահետազոտական աշխատանքներ	8960.0	8960.0
19	Գորիսի սոցիալական տան կառուցման համաներդրման ապահովում (սուբվենցիա)	65000.0	65000.0
20	Իշխանասարի գյուղապետարանի վարչական շենքի գնում	3950.0	3950.0
	Ընդամենը	391592.219	391592.219
	Ամբողջը	1094582.068	1092285.266
	Սյունիքի մարզի մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն,ընթացիկ պահպանում և շահագործում, այդ թվում	105239.0	105239.0
1	Կապանի տարածաշրջանի մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն,ընթացիկ պահպանում և շահագործում	31935.0	31935.0
2	Գորիսի տարածաշրջանի մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն,ընթացիկ պահպանում և շահագործում	22754.0	22754.0
3	Սիսիանի տարածաշրջանի մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն,ընթացիկ պահպանում և շահագործում	32184.0	32184.0
4	Մեղրու տարածաշրջանի մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն,ընթացիկ պահպանում և շահագործում	18366.0	18366.0
	Ընդամենը	105239.0	105239.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

	Ընդամենը Սյունիքի մարզպետարանի պատվիրատվությամբ	1199821.068	1197524.266
	Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն		
1	Անգեղակոթի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	127576.055	127576.055
2	Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգում	56503.000	56503.000
3	Կապանի թիվ 2 ավագ դպրոցի հիմնանորոգում	108668.620	108668.620
4	Սիսիանի ավագ դպրոցի հիմնանորոգում 1-ին փուլ	102691.644	102691.644
	Սիսիանի ավագ դպրոցի հիմնանորոգում 2-րդ փուլ (հուլիս)	25093.823	25093.823
	Սիսիանի ավագ դպրոցի հիմնանորոգում 3-րդ փուլ (հոկտեմբեր)	6028.670	6028.670
5	Գորիսի Ա. Բակունցի անվան տուն թանգարանի հիմնանորոգում	26115.00	26115.00
6	Գորիսի Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի հիմնանորոգում և ջեռուցման համակարգի վերականգնում	16134.300	16134.30
	Կապանի թիվ 9 դպրոցի վերանորոգում	45702.4	45702.40
	Ընդամենը	514513.512	514513.512
	Պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն		
	Սյունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն, ընթացիկ պահպանում և շահագործում, այդ թվում	690635.662	690635.662
	Կապանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն, ընթացիկ պահպանում և շահագործում	179546.226	179546.226
	Գորիսի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն, ընթացիկ պահպանում և շահագործում	160694.000	160694.000
	Սիսիանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն, ընթացիկ պահպանում և շահագործում	118395.436	118395.436
	Մեղրու տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանություն, ընթացիկ պահպանում և շահագործում	232000.0	232000.0
	Ընդամենը	690635.662	690635.662
	Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի Իսլամական հանրապետության սահման ա/6 (կմ 313+650-կմ 313+850 սողանքային ճանապարհահատվածի վերականգնում	48610.9	48610.9
	Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի Իսլամական հանրապետության սահման ա/6 կմ 365+000 սողանքային ճանապարհահատվածի վերականգնում	98155.0	98155.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Մ-2-Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Մեղրի-Իրանի Իսլամական հանրապետության սահման ա/ճ կմ281+800 հատվածում ներքին հենապատի վերանորոգում	36943.0	36943.0
Ճանապարհների նշագծում	66500.0	66500.0
Ընդամենը	250208.9	250208.9
Պատվիրատու՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն		
Արաքս գետի ափապաշտպան միջոցառումների իրականացում	95475.0	95475.0
Ընդամենը	95475.0	95475.0
Պատվիրատու՝ «ԼԵՌ-ԷՔՍ» ՍՊԸ		
ՀՀ Սյունիքի մարզի ք.Կապանի Ռ. Մինասյանի փողոցի ասֆալտապատում /լրացուցիչ աշխատանքներ/	16898.7	16898.7
Ընդամենը	16898.7	16898.7
Պատվիրատու՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամ		
«Կապանի ԲԿ» ՓԲԸ մանկական մասնաշենքի հիմնանորոգում	90385.1	90385.1
Ընդամենը	90385.1	90385.1
Պատվիրատու՝ Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ (ՀՍՆՀ)		
Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի ցանկապատի կառուցում և բարեկարգում	10910.856	10910.856
Գորիսի թատրոնի ջեռուցման համակարգի վերակառուցում	10126.155	10126.155
Քարաշենի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցում, տարածքի բարեկարգում	23449.655	23449.655
Կոռնիձորի համայնքի կենտրոնի շենքի ջեռուցման համակարգի կառուցում, տարածքի բարեկարգում	1206.143	1206.143
Անգեղակոթի համայնքի կենտրոնի շենքի հիմնանորոգում	53703.4	53703.4
Իսնձորեսկի մշակույթի կենտրոնի շենքի հիմնանորոգում	33969.61	33969.609
Իսնաձախի դպրոցի հիմնանորոգում	88000.0	88000.0
Գեղանուշի միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում	13345.75	13345.75
Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, տանիքի վերակառուցում	46929.606	46929.606
Բնունիսի հիմնական դպրոցի շենքի կառուցում	59704.357	59704.36
Ընդամենը	341345.488	341345.488
Պատվիրատու՝ «Դատաիրավական բարեփոխումների ծրագիր»		
Կապանի դատարանի շենքի կառուցում	85000.0	85000.0
Ընդամենը	85000.0	85000.0
Պատվիրատու՝ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Սիսիանի 5, Գորիսի 6 և Շինուհայրի ներառական դպրոցներում ֆիզիկական միջավայրի հարմարեցում հատուկ կարիքավոր երեխաներին /թեքահարթակի կառուցում/	175.5	175.5
Բալաք համայնքի խմելու ջրի ցանցի վերանորոգման համար շինանյութի տրամադրում	260.0	260.0
Բռնակոթի մանկապարտեզի հարակից տարածքում խաղահրապարակի ստեղծում	754.0	754.0
Գետաթաղի փողոցային լուսավորության համար անհրաժեշտ շինանյութերի տրամադրում	396.5	396.5
Իշխանասարի ջրարբիացման համակարգի վերանորոգման համար շինանյութի տրամադրում	1094.0	1094.0
Իշխանասարի շուկայի տարածքի բարեկարգման համար շինանյութի տրամադրում	917.6	917.6
Շամբի դպրոցի կոյուղու վերանորոգման համար շինանյութի տրամադրում	101.4	101.4
Սավարդ համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի վերանորոգում	1225.5	1225.5
Սավարդ համայնքի սպորտհրապարակի վերանորոգում	194.0	194.0
Սառնակունքի կենցաղի տան վերանորոգում	1720.32	1720.32
Սիսիան համայնքի Գայի թաղամասում խաղահրապարակի տեղադրում	2008.45	2008.5
Քարահունջի փողոցային լուսավորության համար անհրաժեշտ շինանյութերի տրամադրում	2410.2	2410.2
Կապան քաղաքի Շղարշիկ թաղամասի թիվ 8 դպրոցի նիստերի դահլիճի բեմի բարեկարգում	720.0	720.0
Կապանի թիվ 6 դպրոցի նիստերի դահլիճի բարեկարգում և կահավորում	2069.0	2069.0
Հանգստի տարածքի կառուցում Կապան քաղաքի Բաղաբերդ 1 թաղամասում	2479.0	2479.0
Ամառային երկու բաց շվաքարանների կառուցում Աշոտավան թաղամասում	1580.0	1580.0
Խաղահրապարակի կառուցում Ագարակ գյուղում	3628.0	3628.0
Կանգառի բարեկարգում Կապան քաղաքի Կավարտ թաղամասում	350.0	350.0
Խաղահրապարակի կառուցում Կապան քաղաքի Բաղաբերդ թաղամասում	7834.0	7834.0
Խաղահրապարակի կառուցում Կապան քաղաքի Ձորք թաղամասում	12370.0	12370.0
Կապան քաղաքի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության տեխնոլոգիայի կաբինետի վերանորոգում և կահավորում (DGOF)	247.0	247.0
Կապան քաղաքի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության մետաղապլաստե պատուհանների և դռների մոնտաժում	1997.0	1997.0
Կապան քաղաքի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության տարածքի բարեկարգում	2583.0	2583.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Եղվարդի միջնակարգ դպրոցի սանհանգույցների վերանորոգում	1952.0	1952.0
Խաղասարքերի տեղադրում Սրաշեն գյուղի խաղահրապարակում և Սյունիք համայնքի մանկապարտեզում	2065.0	2065.0
Մարզահրապարակի կառուցում Անտառաշատ համայնքում	1235.0	1235.0
Տեխնոլոգիայի դասասենյակի հիմնում Ծավի միջնակարգ դպրոցում	235.0	235.0
Դասասենյակի բարեկարգում Շիկահողի միջնակարգ դպրոցում	174.0	174.0
Աշակերտական խորհրդի սենյակի բարեկարգում Կապանի թիվ 6 դպրոցում	1088.0	1088.0
Կապանի թիվ 11 դպրոցի նիստերի դահլիճի բարեկարգում	56.0	56.0
Գեղանուշի հիմնական դպրոցի գրադարանի բարեկարգում	139.0	139.0
Դավիթբեկի միջնակարգ դպրոցի դահլիճի բարեկարգում	398.0	398.0
Ագարակ քաղաքի միջնակարգ դպրոցի հանդերձարանի բարեկարգում	879.0	879.0
Մեղրիի թիվ 2 դպրոցի ճաշասենյակի բարեկարգում	586.0	586.0
Կապանի թիվ 2 մանկապարտեզի խոհանոցի վերանորոգում	2782.0	2782.0
Կապանի թիվ 13 մանկապարտեզի դահլիճի վերանորոգում	3543.0	3543.0
Կապանի թիվ 6 դպրոցի մարզադահլիճի վերանորոգում	4233.0	4233.0
Դավիթբեկ գյուղի դպրոցի սանհանգույցների վերանորոգում	4193.0	4193.0
Ծավ գյուղի դպրոցի սանհանգույցների վերանորոգում	2779.0	2779.0
Եղվարդի դպրոցի ջրագծի և ջրամբարի վերանորոգում	948.0	948.0
Կապան քաղաքի Աշոտավան թաղամասի ակումբի շենքի տանիքի վերանորոգում	2161.0	2161.0
Ընդամենը	76563.5	76563.5
Պատվիրատու՝ Ֆրանսիայի «Երկիր և Մշակույթ կազմակերպություն»		
Եղվարդի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման աշխատանքներ	18000.0	18000.0
Բարձրական համայնքում Բղենու Նորավանքի տանիքի մաքրման և վերանորոգման աշխատանքներ	1200.0	1200.0
Ընդամենը	19200.0	19200.0
Պատվիրատու՝ «Քաջարան» բարեգործական հիմնադրամ		
Քաջարան քաղաքում աստիճանների և աստիճանավանդակների նորոգում և կառուցում	15300.0	15300.0
Քաջարան քաղաքում բակային տաղավարների կառուցում և տեղադրում	7500.0	7500.0
Քաջարան քաղաքում մետաղական բազրիքների մոնտաժում և տեղադրում, եզրաքարերի իրականացում	12100.0	12100.0
Քաջարան քաղաքում հենապատերի բարեկարգում և ջրահեռացման համակարգերի նորոգում	26000.0	26000.0
Քաջարան քաղաքում մանկական խաղասարքերի տեղադրում	14000.0	14000.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Քաջարան քաղաքում տանիքների ջրահեռացման խողովակների վերանորոգում	5900.0	5900.0
Քաջարան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի վերելակների հիմնանորոգում	10300.0	10300.0
Քաջարան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների նորոգում	24900.0	24900.0
Քաջարան քաղաքում այլ աշխատանքներ	5100.0	5100.0
Ընդամենը	121103.0	121104.0
Պատվիրատու՝ «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ		
ք. Ագարակի Սայաթ-Նովա փողոցի վերանորոգման ֆինանսավորում	10000.0	10000.0
ք. Մեղրիի թիվ 1 դպրոցի սպորտ դահլիճի համաֆինանսավորում	2471.0	2471.0
Ընդամենը	12471.0	12471.0
Պատվիրատու՝ Նորաշենիկ գյուղական համայնք /բարերար՝ Հարությունյան Արմեն/		
Նորաշենիկի կենցաղի տան հիմնանորոգում	15000.0	15000.0
Ընդամենը	15000.0	15000.0
Պատվիրատու՝ «Գորիս» բարեգործական հիմնադրամ		
Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնում	14500.0	14500.0
Ընդամենը	14500.0	14500.0
Պատվիրատու՝ «Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն»		
Գորիս քաղաքում սոցիալապես անապահով խավի համար 22 բնակարանոց շենքի կառուցում	79057.386	79057.386
Ընդամենը	79057.386	79057.386
Պատվիրատու՝ Կապան-Գլենդել (ԱՄՆ)		
Կապանի թիվ 4 նախադպրոցական ուսումնական հաստատության սանհանգույցների, խոհանոցի վերանորոգում	3800.0	3800.0
Կապանի թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատության խոհանոցի վերանորոգում	3064.0	3064.0
Ընդամենը	6864.0	6864.0
Պատվիրատու՝ «Դինո Գոլդ Մայնինգ Քամինի» ՓԲԸ		
Կապան քաղաքի Շահումյան փողոցում «Խաղաղության հրապարակի» ստեղծում	18000.0	18000.0
Խաղաղապարակների ստեղծում Կապան քաղաքի տարբեր թաղամասերում	6000.0	6000.0
Ընդամենը	24000.0	24000.0
Պատվիրատու՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ		
Խնձորեսկ համայնքի նախադպրոցական հաստատության մասնակի վերանորոգում	3200.0	3200.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

	Ընդամենը	3200.0	3200.0
	Պատվիրատու՝ Ազարակ գյուղական համայնք		
	Ջրամբարի տիղմի մաքրում և ջրընդունիչի կառուցում	17716.0	17716.0
	Ընդամենը	17716.0	17716.0
	Պատվիրատու՝ «Մեղրի-Ազարակ հիմնադրամ»		
	Ազարակ քաղաքի փողոցային լուսավորության բարելավում	5314.848	5314.848
	«Ազարակի թիվ 1 մ/մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում մարզադահլիճի հիմնանորոգում	7720.0	7720.0
	Ընդամենը	13034.8	13034.8
	Պատվիրատու՝ Ռուսաց լեզվի աջակցման հայ-ռուսաստանյան բարեգործական հիմնադրամ		
	Կապանի Ե. Չարենցի անվան թիվ 13 հիմնական դպրոցի վերանորոգում	22300.0	22300.0
	Ընդամենը	22300.0	22300.0
	Պատվիրատու՝ Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ-Հայաստան		
	Որոտան-2 պոմպակայանի վերականգնում	814312.6	814312.6
	Ներտնտեսային ցանցի վերականգնում Կապանում	24171.9	24171.9
	Ներտնտեսային ցանցի վերականգնում Գորիսում	132915.7	132915.7
	Ներտնտեսային ցանցի վերականգնում Ախլաթյանում	31902.6	31902.6
	Ընդամենը	1003302.8	1003302.8
	Պատվիրատու՝ «Հայջրմուղ կոյուղի» ՓԲԸ-ի ԶԶՀՀ «Հարավային» տարածքային մասնաճյուղ		
	Կապան քաղաքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում	6369.7	6369.7
	Գորիս քաղաքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում	7508.1	7508.1
	Սիսիան քաղաքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում	3486.4	3486.4
	Մեղրի քաղաքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում	9631.5	9631.5
	Կարճևան համայնքում ջրամատակարարման ներքին ցանցի հիմնանորոգում	5559.7	5559.7
	Ընդամենը	32555.4	32555.4
	Պատվիրատու՝ «Ասիական զարգացման բանկ»		
	Ջրամատակարարման ներքին ցանցի նորոգում Կապանի տարածաշրջանում	350000.0	350000.0
	Մաքրման կայանի նորոգում Ազարակում, ներքին ցանցի նորոգում Կարճևանում	200000.0	200000.0
	Վարչական շենքերի կառուցում Սիսիան և Ազարակ քաղաքներում	180300.0	180300.0
	Ընդամենը	730300.0	730300.0
	Ընդամենը մարզում	5475451.347	5473148.55